ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Մեծավորները չեն ներում մեծին,
Եվ միշտ անգամ
Մահից հետո էլ չեն ներում մեծին,
Այլ մեծարում են՝
մեծավորական
Պատշաճությունը
պահելու համար...

ՇԱԲԱԹ, 31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.
№ 28 (371)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Դա մեռածներին պետք չէ բնավ, իսկ ապրողներին շատ է հարկավոր

Հիշողություն

Չկա մի ընտանիք, որին շրջանցած լինի Երկրորդ աշխարհամարտը: Մեծ հայրենականի ռազմադաշտերում բազում ընկածների ճակատագիրն անհայտ է, տեղեկություններ չկան, թե որտեղ են ամփոփված նրանց աճյունները: Յոթ տասնամյակ է մեզ բաժանում Մեծ հայրենականի հաղթական ավարտից, բայց, ինչպես ասում են, վերքը չի սպիացել: Մինչեւ վերջերս ոչինչ հայտնի չէր Հայրենական մեծ պատերազմի նահատակ Սավադ Մարտիրոսյանի վերջին հանգրվանի մասին: Նախ նրա եղբոր՝ Հուսիկ Հարությունյանի թոռը Մեծ Հայրենականում զոհվածների մասին կայքէջից տեղեկանում է, որ պապի եղբայրը զոհվել է, եւ նրա աճյունն ամփոփվել է Ինգուշեթիայի Մալգոբեկ քաղաքում: Բայց դեռեւս հարկավոր էր այդ փաստը ճշտել եւ հավելյալ տեղեկություններ հայթայթել: Հուսիկ Հարությունյանը դիմում է Կապանի զինկոմիսարիատ, որտեղ պահպանված Սավադ Մարտիրոսյանի

էջ 4

Քաջարանի կոմբինատի արդյունահանման ծավալները կհասնեն 22 մլն տոննայի

Հանքարդյունաբերություն

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում է ընդլայնել Քաջարանի հանքավայրի արդյունահանման ծավալները՝ հանքաքարի հանույթը եւ վերամշակումը տարեկան հասցնելով 22մլն տոննայի:

Այդ առիթով հոկտեմբերի 15-ին ձեռնարկությունում տեղի ունեցավ հանրային քննարկում՝ կապված Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխության հետ: Մասնավորապես՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության: Քննարկմանը մասնակցում էին կոմբինատի գլխավոր տնօրեն Նիլ Ստիվենսոնը, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, տեխնիկական տնօրեն Աշոտ Մարգարյանը, վարչական տնօրեն Վահե Հակոբյանը, ձեռնարկության ստորաբաժանումների եւ ազդակիր համայնքների՝ Կապանի, Քաջարանի, Լեռնածորի, Սյունիքի, Արծվանիկի, Քաջարան գյուղի, Սեւաքարի ղեկավարները:

ՁՊՄԿ-ի իրավական աջակցության ծառայության պետ Պերճ Խաչատրյանը հայտնեց, որ անցկացվելու է եւս նման երեք քննարկում, իսկ քննարկման մասնակիցների ողջամիտ առաջարկությունները հաշվի կառնվեն նախագծային փաստաթղթերի մշակման փուլում: Նախագծի փոփոխության տեխնիկական լուծումները ներկայացրեց գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Ա.Մարգարյանը՝ մանրամասնելով, որ նախապես քննարկվել է բաց հանքի մշակման երկու տարբերակ. առաջինը տնտեսապես ավելի շահավետ է եւ նախատեսում է հանքավայրի շահագործում՝ աջակողմյան եւ ձախակողմյան պաշարների ընդգրկմամբ: Երկրորդ տարբերակի դեպքում բաց հանքի մշակումը նախատեսում է միայն աջակողմյան պաշարների ընդգրկումը: *«Խնդիրը քննարկեցինք ղեկավարության հետ եւ եկանք այն եզրակացության, որ ձախակողմյանի պաշարների արդյունահանման այս փուլում, այս պահին պատրաստ չենք: Քանզի ունենք չլուծված խնդիրներ՝ բնապահպանական, ֆինանսական, շինարարական, ընտրեցինք աջակողմյան մասը, քանզի այս պահին մեզ համար տնտեսապես լավագույն տարբերակն է* - մանրամասնեց Ա.Մարգարյանը, - *մենք բաց հանքը մշակելու ենք ոչ թե նոր տարածքներ ընդգրկելու ճանապարհով, այլ դեպի խորքը, դեպի ընդերքը թափանցելու ուղիով: Օգտագործելու ենք հին լցակույտերը՝ աչքի առաջ ունենալով, որ ծախսերը գնալով շատանալու են, բայց ստիպված ենք մեծ ծախսեր անել՝ զուտ բնապահպանական, սոցիալական նկատառումներից ելնելով»:*

էջ 2

Պայքար պտղի սեռի խտրական ընտրության դեմ

«Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ում արդեն երկրորդ անգամ տեղի ունեցավ սեմինար՝ նվիրված Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներին:

«Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում, որ իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ, Հայաստանի տարբեր բնակավայրերում կազմակերպվում են նմանատիպ հանդիպումներ: Ծրագիրն իրականացվում է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն», «Արմավիրի զարգացման կենտրոն», «Մարտունու համայնքային խորհուրդ» հկ-ների ու «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից եւ նպատակն է նպաստել Հայաստանում երեխա ունենալը սեռով պայմանավորելու վերջերս նկատվող միտման փոփոխությանը եւ հղիության ընթացքում կանխակալ ընտրության ցուցանիշների մակարդակի նվազեցմանը:

Ինչպես նշեց «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության ներկայացուցիչ Սոֆիկ Մինասյանը, ծրագրի արդյունքների շնորհիվ քաղաքացիական հասարակական կառույցները, համայնքային գործիչները եւ իշխանությունները կունենան ամբողջական ընկալում՝ երեխայի սեռի կանխակալ ընտրության բացասական հետեւանքների վերաբերյալ, ինչպես նաեւ անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ՝ պայքարելու դրա դեմ, երեխա ունենալը սեռով պայմանավորելու երեւույթի հանդեպ բնակչության ընկալումներն ու վերաբերմունքը դրական փոփոխություններ կկրեն, եւ կբարձրանա երեխա ունենալը սեռով պայմանավորելու եւ հղիության ընթացքում կանխակալ ընտրության կանխարգելմանն ուղղված քաղաքականության արդյունավետությունը:

«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Վահան Ասատրյանը տեղեկացրեց, որ 2015թ. հունիսին հաստատվեց պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ պետական ծրագիրը, որի իրականացմանն օժանդակում է նաեւ Եվրոպական միությունը: **«Ե՛վ պետական ծրագրի, ե՛ւ վերոնշյալ ծրագրի գործողությունները գրեթե ամբողջովին համընկնում են. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի երեք բաղադրիչներն են՝ մարզերում համապատասխան կարողությունների ձեւավորում կանխարգելման միջոցառումներ ձեռնարկելու նպատակով, համայնքային հանդիպումների միջոցով բնակչության շրջանում քարոզչության իրականացում եւ համապատասխան քաղաքականության՝ օրենքների, իրավական ակտերի եւ այլ գործողությունների մշակում»,** – տեղեկացրեց Վ.Ասատրյանը:

Վերջին տարիներին արված հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում առկա է հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատման երեւույթը, այսինքն՝ հայաստանյան ընտանիքների մի մասն աբորտի միջոցով թույլ չի տալիս աղջիկ երեխաներին ծնվել՝ նախընտրելով տղա երեխա ունենալ: Արդյունքում, վաղ 1990-ականներից ի վեր Հայաստանում շեղվել է նորածինների հարաբերակցությու-

էջ 3

«Տեր լինելով՝ ծառայենք մեր քաղաքին»

Ավանդույթ

Այս խորագրով Կապան քաղաքի տոնը մեկնարկեց հոկտեմբերի 13-ին Գարեգին Նժդեհի վերակառուցված հրապարակում երգող շատրվանների բացման արարողությամբ, որին մասնակցում էր հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Քաղաքի տոնին նվիրված բարեմաղթանքի խոսք ասաց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Տաղավարներում ցուցադրված էին կապանցի արտադրողների ապրանքատեսակները, սյունիքյան կերակրատեսակներ: Երգերի կատարումներով հանդես եկան քաղաքապետարանի դպրոցականների ու կանանց երգչախմբերը, Երեւանից հրավիրված երգիչ-երգչուհիները:

Հաջորդ օրերին անցկացվեցին մշակութային միջոցառումներ: Հոկտեմբերի 14-ին Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը հանդիսականին ներկայացրեց Զորայր Խալափյանի «Պռոշ Պռոշիչի երազը» մեկ գործողությամբ կատակերգությունը (բեմադրությունը՝ Կարո Նաղդալյանի): Հաջորդ օրը Վ.Սարգսյանի անվան մանկական զբոսայգու բեմահարթակը տրամադրվել էր «Վահան Մանուկյան» երգի ստուդիայի սաներին, ովքեր հանդես եկան Կապանին նվիրված համերգով: Հոկտեմբերի 16-ին ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում տեղի ունեցավ գրաֆիկական աշխատանքի ցուցահանդեսի բացում: Ցուցադրանքում ներկայացված էին Ռուդոլֆ Խաչատրյանի, Հովհաննես Զարդարյանի եւ այլ գեղանկարիչների գրաֆիկական եւ կոմպոզիցիոն աշխատանքներ:

Քաղաքի օրը նշվեց հոկտեմբերի 17-ին: Գիշերը տեղացող հորդառատ անձրեւն առավոտյան միայն ժամը 9-ին մոտ դադարեց: Աննպաստ եղանակի պատճառով քաղաքապետարանի մերձակա այգում ժամը 10-ին նախատեսված գեղանկարչական աշխատանքի ցուցահանդեսը կայացավ կեսօրից հետո Վազգեն Սարգսյանի անվան զբոսայգում: Նկարակալներին Կապանի արվեստի եւ գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի եւ արվեստի պետական քոլեջի սաների գեղանկարչական գործերն էին, ցուցադրված էին նաեւ դիզայներական աշխատանքներ: Իսկ «Կապանի օր» տոնակատարությանը նվիրված միջոցառումների շարքը սկսվեց Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի այցելությամբ, որտեղ տոնի խորհրդին նվիրված եկեղեցական պաշտոն կատարեց Կապանի հոգեւոր հովիվ Վահան քահանա Հեբոյանը, այնուհետեւ բարեմաղթանքի խոսքեր հղեց կապանցիներին քաղաքի տոնի առթիվ: Եկեղեցում քաղաքապետարանի մանկական երգչախումբը (ղեկավար՝ Գայանե Հարությունյան) հնչեցրեց Կոմիտասի «Ազգային օրհներգը»:

Հաջորդ հանգրվանը Բաղաբուրջի հուշահամալիրն էր: Նախ ծաղիկներ դրվեցին անհայտ զինվորի, Սպիտակյան երկրաշարժի զոհերի եւ Արցախյան պատերազմում զոհված խաղաղ բնակիչների հիշատակը հավերժացնող խաչքար-հուշաքարերի պատվանդանին, այնուհետեւ հարգանքի տուրք մատուցվեց սպարապետ Վազգեն Սարգսյանի եւ մերօրյա ազատամարտում զոհված մարտիկների հիշատակին, կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

«Կապանի օր» տոնակատարության ծրագիրը ներառում էր նաեւ մարզական միջոցառումներ: Մանկան աշխուժություն էր Շահումյան-2 հասցեում՝ «Ամերիաբանկի» առջեւի հրապարակում, որտեղից մեկնարկեցին միջոցառումները: Նախ անցկացվեց կրոսավազք, որին մասնակցում էր 160-ից ավելի դպրոցական, այնուհետեւ մրցուղի դուրս եկան պատանի հեծանվորդները, որոնց թիվն անցնում էր քառասունից: Հեծանվավազքում լավագույն ճանաչվածին հանձնվեց հեծանիվ, իսկ կրոսավազքում եւ հեծանվավազքում մրցանակային տեղեր գրաված մասնակիցներն արժանացան մեդալների ու հուշանվերների: Քաղաքապետին կից երիտասարդական խորհուրդը տոնական տորթ էր պատրաստել տվել, որն այս անգամ բաժանվեց Կապանի երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատության, Երեւանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի Կապանի մասնաճյուղի, Կապանի թիվ 3 հա-

էջ 4

Մեղրու ճանապարհաշինարարներն արժանացել են նոր մրցանակի

ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատի որոշմամբ 2015թ. հոկտեմբերի 23-ին «Քաղաքաշինական եւ ճանապարհաշինարարական շինարարության բնագավառում առաջատար ընկերություն» անվանակարգում «Մերկուրի» մրցանակ է շնորհվել «Մեղրու ճՇՇՁ» ՍՊԸ-ին (տնօրեն՝ Ազատ Գասպարյան):

Նշենք, որ «Մերկուրի» մրցանակաբաշխությունն անցկացվում է 2008 թվականից եւ շնորհվում է տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող առաջատար ընկերություններին:

«Մեղրու ճՇՇՁ» ՍՊ ընկերությունը մրցանակին արժանացել է քաղաքաշինության եւ ճանապարհաշինության բնագավառում 2015թ. կատարած մի շարք բարձրորակ աշխատանքների՝ մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության ավտոհավաքակայանի, Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի, Մ-2 միջպետական ճանապարհահատվածի (Դիբագի լեռնանցք) շինարարության համար:

Շնորհավորում ենք Մեղրու ճանապարհաշինարարներին՝ հերթական մրցանակին արժանանալու համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նպատակը՝ որակյալ մասնագետներ պատրաստելը

Կրթություն

«Մեղրու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հիմնվել է 2001թ. հոկտեմբերի 1-ին դպրոցի տարրական մասնաշենքում: Առաջին տնօրենը Ժորա Միրզոյանն էր, որին հաջորդեց Հաբեթնակ Խաչիկյանը, ներկայումս՝ Թամամ Հովհաննեսյան: Տնօրենի հավաստմամբ՝ ի սկզբանե էլ քոլեջն ունեցել է իր ավանդույթները:

Ի դեպ, Թամամ Հովհաննեսյանը, ով ֆիզիկայի մասնագետ է, 1992-2014թթ. եղել է Ագարակ քաղաքի մանկապարտեզի տնօրենը՝ ստեղծելով հիանալի եւ օրինակելի մանկապարտեզ տարածաշրջանի համար:

Մեղրու պետական քոլեջը ներկայումս միջին մասնագիտական կրթություն է իրականացնում՝ «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ», «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում» բաժիններով: **«Ի սկզբանե ընտրվել են այն մասնագիտությունները, որոնք Մեղրու տարածաշրջանի համար արդիական են եւ բխում են նրա տնտեսական շահերից: Նախկինում եղել են իրավագիտություն եւ դասավանդում տարրական դասարաններում բաժինները: Բայց հետագայում իրավագիտությունը դուրս է մնացել՝ պահանջարկ չունենալու պատճառով, իսկ դասավանդում տարրական դասարաններում բաժինը դուրս է մղվել, քանի որ դպրոցում աշխատելու համար օրենսդրությամբ պահանջվում է բարձրագույն կրթություն»,** – նշեց տնօրենը:

Տնօրենի տեղեկացմամբ՝ նախատեսում են ավելացնել բաժինները՝ «Նախադպրոցական կրթություն» (հեռակա ուսուցմամբ) եւ ելնելով անհրաժեշտությունից՝ «Տուրիզմ»: Տարածաշրջանի մանկապարտեզների աշխատակիցների մի մասը չունի համապատասխան կրթություն, թեկուզեւ օրենքը թույլ է տալիս այդ բնագավառում երկարամյա փորձ ունեցողներին աշխատել: Այս բաժինը բացելու համար արդեն դիմել են նախարարություն, իսկ «Տուրիզմ»-ի համար հավանաբար հաջորդ ուստարում կդիմեն:

Հիմնական կրթությամբ ընդունված ուսանողները հիմնականում սովորում են պետպատվերի շրջանակներում, այս տարի պետպատվերով 41 տեղ է հատկացվել քոլեջին՝ 35-ի փոխարեն: **«Դիմել եմ նախա-**

էջ 4

Քաջարանի կոմբինատի արդյունահանման ծավալները կհասնեն 22 մլն տոննայի

էջ 1

Նոր նախագծի իրականացումը ենթադրում է արտադրության տեխնիկական վերազինում, այդ առիթով բանախոսը նշեց, որ ձեռնարկության տեխնոլոգիական հավաքակայանը 80 տոկոսով նորացել է, նախատեսվում է 2016-2017 թվականներին անցկացնել 1,2 մետր տրամագծով հոսքագիծ, որ կբարձրացնի թափուկատարի անվտանգությունը: *«Այսօր բնապահպանական պահանջները շատ խիստ են դրված, եւ ձեռնարկությունը վարելու է բնապահպանական առումով պատասխանատու քաղաքականություն»,* – խնդրո առարկայի առնչությամբ ասաց բանախոսը եւ հավելեց, որ կդրվեն նոր ֆիլտրեր ու զտիչներ, իսկ հանքահարստացուցիչ ֆաբրիկայում կտեղադրվեն ավելի հզոր աղացներ:

Իրենց կարծիքը հայտնելու հնարավորություն տրվեց նաեւ ազդակիր համայնքների ղեկավարներին: Բայց նրանց խոսքում կառուցողական առաջարկներն իրենց տեղը զիջեցին երախտագիտությանը, որ ձեռնարկությունն ավելացնում է իր հզորությունները: Այնուհետեւ քննարկման մասնակիցները հանդես եկան առաջարկություններով, եղան նաեւ հարցադրումներ կապված Գեղիի ջրամբարի, Արծվանիկի պոչամբարի հետ: Մասնավորապես հայտնվեց, որ Սեւաքարի գետի ջրերը երեք կիլոմետր թունելով հասնելու են Աճանան գետ, որ ավելի քիչ քանակությամբ ջուր հավաքվի Արծվանիկի պոչամբարում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Բաց նամակ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին

Հարգելի՛ պարոն Կարապետյան

Սյունիքի մարզի Նռնաձոր համայնքը տարվա կտրվածքով ստանում է 250-300 տոննա նռան բերք եւ ներկայումս կանգնած է սպառման մեծ խնդրի առջեւ:

Խնդրում ենք Ձեզ ազդել գործարանների վրա՝ բերքի իրացումն ապահովելու համար:

Կանխավ շնորհակալություն:

Մ.Մկրտչյան
ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձոր համայնքի ղեկավար

ՀՀ Սյունիքի մարզ, գ.Նռնաձոր
nrnadzor@mail.ru
հեռ./094-55-70-55/
26.11.2015թ

Գոնե հանրապետության կառավարությունում գիտե՞ն, թե ինչ է կատարվում Կապանի լեռնահանքային ձեռնարկությունում

Տնտեսություն

Հրապարակի վրա է ՀՀ հարկային ծառայության տեղեկատվական ամփոփագիրը 2015թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի ու տուրքերի մեծություններ-ի մասին:

Ինչպես միշտ, մեզ հետաքրքրում է Սյունիքի մարզի տնտեսվարող սուբյեկտների ընդգրկվածությունն այդ ամփոփագրում:

Փաստաթուղթը վերստին հաստատում է, որ մարզի տնտեսական դաշտում վերածեւումներն ու ազդեցության ոլորտների վերաբաշխումը շարունակվում է: Խոշոր տնտեսվարողների ցանկից դանդաղ, բայց հաստատուն քայլերով դուրս են մղվում երբեմնի հայտնի կլանի հովանու ներքո գտնվող տնտեսվարողները: Այդ շարքում, ըստ էության, մնացել է միայն «Զանգեզուր մայնինգ» ընկերությունը:

Խոշոր հարկատուների ցուցակի 3-րդ հորիզոնականն առաջին անգամ զբաղեցնում է «Որոտանի հէկերի համալիր» ՓԲԸ-ն, որը 9 ամսում պետությանն է վճարել 16,7 մլրդ դրամ (հիմնական մասը՝ հարկային մարմինների կողմից հավաքագրված գումար): Ստույգ չենք կարող ասել, թե այդ գումարն ինչից է գոյացել, սակայն չի բացառվում, որ այն առնչվում է հէկերի համալիրի հայտնի առուվաճառքի հետ:

Ամենաուշագրավը, սակայն, մարզի հանքարդյունաբերական ձեռնարկություններում տիրող իրավիճակն է:

Զարմացնողը «Լեռ-էքսի» ներկայությունն է այդ ցուցակում: Ավելի քան մեկ տարի պարապուրդի մեջ հայտնված ընկերությունը շարունակում է տեղ զբաղեցնել խոշոր հարկատուների ցանկում:

Իրավիճակի բարելավումը շարունակվում է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում: Ընթացիկ տարվա 9 ամսում այդ ընկերությունը պետությանն է վճարել 19,8 մլրդ դրամ, որը մոտ 7 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Աճը նկատելի է նաեւ ուղղակի հարկերի (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ) վճարման առումով: Արձանագրված թվերը բարձր են նաեւ 2012-ի համապատասխան ցուցանիշներից:

Իհարկե, Քաջարանի կոմբինատը դեռ շատ հեռու է 2013թ. նույն ժամանակի բնագծից (ընդամենը՝ 26,3 մլրդ դրամ հարկեր, որից՝ 10,5 մլրդ դրամ՝ ուղղակի հարկեր), բայց կայուն աճի միտումն ակնհայտ է:

Վերջին երեք-չորս տարում իրավիճակը կայուն է նաեւ «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում. 2015թ. 9 ամսում՝ 2,2 մլրդ դրամ հարկեր (որից՝ ուղակի հարկեր՝ մոտ 677 մլն դրամ), 2014թ. 9 ամսում՝ 2,3 մլրդ դրամ հարկեր (որից՝ ուղղակի հարկեր՝ 1.164.234,6 դրամ), 2013թ. 9 ամսում՝ 2,5 մլրդ դրամ հարկեր (որից՝ ուղղակի հարկեր՝ 821.606,4 դրամ), 2012թ. 9 ամսում՝ 2,3 մլրդ դրամ հարկեր (որից՝ ուղղակի հարկեր՝ 575.600,0 դրամ):

Հատկապես պղնձի շուկայում վերջին ամիսներին տիրող ծայրահեղ վատ իրավիճակի պայմաններում նման ցուցանիշների ապահովումը վկայում է այդ տնտեսության խելամիտ կազմակերպման մասին:

Իսկ ի՞նչ արդյունքներ ունենք Կապանի լեռնահանքային ձեռնարկությունում:

Ընթացիկ տարվա 9 ամսում Կապանի կոմբինատը պետությանն է վճարել 2.353.816.9 դրամ (որից՝ ուղղակի հարկեր՝ 950.000.0 դրամ):

2012թ. 9 ամսում այդ ընկերությունը պետությանն էր վճարել 5.638.945.4 դրամ (որից՝ ուղղակի հարկեր՝ 2.026.182.0 դրամ):

Բերված թվերը վկայում են, որ «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲ ընկերության ներկայիս ղեկավարությանը (տնօրեն՝ Հրաչ Զաբրյան) «հաջողվել է» անցնող երեք տարում ընկերության նահանջն ապահովել 58,3 տոկոսով: Իսկ դա նշանակում է, որ 2012թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ Կապանի լեռնահանքային ձեռնարկությունը 2015թ. 9 ամսում պետությանը պակաս է վճարել 3 մլրդ 285 մլն դրամ: Նույն ժամանակաշրջանում 1 մլրդ 76 մլն դրամով պակասել են ուղղակի հարկերը:

Իրավիճակի արտառոցությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ վճարված հարկերն արտահայտում ենք արտարժույթով (2012թ. 1 ԱՄՆ դոլարն արժեր (միջին փոխարժեքը) 401,8 դրամ, 2015 թվականին՝ 477,3 դրամ):

2012 թվականից հետո Կապանի կոմբինատին համակած այս ճգնաժամի մասին դեռեւս ոչ ոք մասնագիտական պարզաբանումներ չի տվել: Մինչդեռ հետընթացը շարունակվում է: Հետաքրքիր է՝ գոնե Հայաստանի կառավարությունում գիտե՞ն, թե ինչ է կատարվում Կապանի լեռնահանքային ձեռնարկությունում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի զավակները՝ Մոսկվայի համար ճակատամարտում

Նոր գիրք

Ըստ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմագիտության դոկտոր Կլիմենտ Հարությունյանի, ով Հայրենական մեծ պատերազմի վերաբերյալ 20 ծավալուն աշխատության եւ ավելի քանի 200 հոդվածի հեղինակ է, Մոսկվայի ճակատամարտում ռուսների, ուկրաինացիների, բելառուսների եւ ԽՍՀՄ մյուս ազգությունների զավակների հետ ֆաշիստական Գերմանիայի բանակների դեմ կողք կողքի կռվել են հայ ժողովրդի մի քանի տասնյակ հազար զավակները: Այս մասին նա պատմում է «Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Մոսկվայի ճակատամարտին» ռուսերեն աշխատությունում, որը լույս է ընծայել «Զանգակ» հրատարակչությունը՝ մոսկվաբնակ հայրենակից, բարերար Արամ Մանուկյանի (Լեվայի) աջակցությամբ:

Մոսկվայի ճակատամարտին իր հատուկ զորախմբով մասնակցել է մարշալ Հովհաննես Բաղրամյանը եւ, ըստ հեղինակի, կարեւոր դերակատարություն ունեցել: Եվ պատահական չէ, որ նրա մեդալների թվում հայտնվել է նաեւ Մոսկվայի պաշտպանության համար մեդալը: Մոսկվայի ճակատամարտի «նախերգանքին»՝ Սմոլենսկի ճակատամարտին, ակտիվորեն մասնակցել է զրահատանկային զորքերի մարշալ Համազասպ Բաբաջանյանի ղեկավարած զորամիավորումը:

Տանկային գումարտակի մի հրամանատար իր գումարտակով կարողացել է Մոսկվայի տակ գերմանական 18 տանկ խփել: Ինքը զոհվել է, հետմահու ներկայացրել են հերոսի կոչման, բայց միայն Լենինի շքանշան են տվել: Հեղինակը արխիվներից ճշտել է նրա ազգանունը՝ Սահրադյան, ծննդավայրը՝ Զավախքի Սաթխա գյուղ: Ազգանունը մինչ այդ սխալ են գրել, Սարատիանի՝ կարծելով, թե վրացի է:

Գրքում ներկայացված են Մոսկվայի ճակատամարտին մասնակցած տարբեր գործիչներ, այդ թվում՝ Անաստաս Միկոյանը, Իվան Թեւոսյանը, Արտեմ Միկոյանը, Կիրիլ Շչոլկինը (Կիրակոս Մետաքսյան), Հովհաննես Բաղրամյանը, Համազասպ Բաբաջանյանը, Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանց), դիվիզիաների եւ գնդերի հրամանատարներ, ակադեմիկոսներ, գիտությունների դոկտորներ:

Լուսանկարներից բացի, գրքի վերջում տրված է ճակատամարտում զոհված եւ անհետ կորած հայորդիների ցուցակը:

Կ.Հարությունյանի աշխատանքը բարձր գնահատեցին պատերազմի մասնակցի զավակ Հենրիկ Խառատյանը, ՀՀ պաշտպանության նախարարությանն առընթեր բարձրագույն սպայակազմի հանձնաժողովի նախագահ, գեներալ մայոր Վլադիմիր Հայրապետյանը, միջազգային անվտանգության ասպետական ակադեմիայի կողմից՝ գեներալ լեյտենանտ Արսեն Ֆիդանյանը եւ ուրիշներ:

Կ.Հարությունյանը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի կողմից պարգեւատրվել է Մեծ հաղթանակի 70-ամյակի հոբելյանական մեդալով, որը նրան հանձնեց Վլադիմիր Հայրապետյանը:

Եղան նաեւ այլ պարգեւներ:

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐՅԱՆ

«Հայաստանի Հանրապետություն», 07.10.2015

Պայքար պտղի սեռի խտրական ընտրության դեմ

էջ 1

նը՝ 2012թ. կազմելով 114 տղա 100 աղջկա դիմաց: Մինչդեռ, ընդունելի է համարվում 102-106 տղա 100 աղջկա դիմաց հարաբերակցությունը: Համանման խնդիր ունեցող այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ այս երեւույթը կարող է ցավալի հետեւանքների հանգեցնել՝ ներառյալ հանցավորության աճը, տղամարդկանց մեծացող արտագաղթը, կանանց առեւանգումը: Հայաստանում առկա են սեռով պայմանավորված հղիության ընդհատման երեք նախապայմանները՝ հայաստանյան հասարակությունը տղա երեխաներին գերադասում է աղջիկներից, երկրում առկա եւ հասանելի են համապատասխան տեխնոլոգիաները, որոնք ապագա ծնողներին թույլ են տալիս վաղօրոք իմանալ երեխայի սեռը եւ խուսափել անցանկալի աղջիկ երեխաներից, եւ զույգերը նախընտրում են քիչ երեխա ունենալ:

Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում տարբերվում է նաեւ ըստ նրա, թե նորածինն ընտանիքում որերորդ երեխան է: Այսպես՝ ծնված երրորդ եւ հաջորդ երեխաների մեջ 100 աղջկան բաժին է ընկնում 160 տղա, որը, ըստ երեւույթին, աշխարհում երբեւէ արձանագրված ամենաբարձր ցուցանիշն է: Բացի դրանից՝ ընտանիքում երկու երեխայից մեկի տղա լինելը բավական է, որպեսզի հայաստանյան ընտանիքներն իրենց վերարտադրողական մտադրությունները համարեն իրականացած:

Եթե այս երեւույթը շարունակվի, ըստ կանխատեսումների, մինչեւ 2060թ. Հայաստանը կկորցնի գրեթե 93 հազար կին կամ ապագա մայր, եւ բնակչությունը կնվազի 80 հազարով:

Ծրագրի երեք բաղադրիչներն իրականացվում են զուգահեռաբար ողջ հանրապետության տարածքում: Կազմակերպվող դասընթացների արդյունքում մասնակիցները, որոնք տարբեր բնագավառների ներկայացուցիչներ են (հոգեւորականներ, մանկաբարձ-գինեկոլոգներ, մանկաբույժներ, ՔԿԱԳ-ի աշխատակիցներ, սոցաշխատողներ, մանկավարժներ եւ այլն), ծանոթանում են ՀՀ-ում ծնելիության խնդիրներին, ձեռք բերում հաղորդակցման հմտություններ, քաղաքացիական ակտիվ խմբեր ձեւավորում եւ այլն: Օրինակ՝ Գորիսում ձեւավորված քաղաքացիական ակտիվ խմբի համակարգողներից Ժասմեն Խաչատրյանը նշեց, որ մինչ այս դասընթացներն իրենք չգիտեին, որ իրականում սա բավականին լուրջ, կարելի է ասել, ազգային հիմնահարց է: Նախատեսում են հանդիպումներ կազմակերպել տարբեր բնագավառների ներկայացուցիչների հետ, իրազեկել նրանց խնդրի լրջության մասին, փորձել դրա հաղթահարման ուղիներ գտնել:

«Սա ոչ միայն գենդերային խնդիր է, այլեւ ավելի շատ ազգային անվտանգության խնդիր: Ակնկալիքներ կան, որ ծրագրի իրականացման երկու-երեք տարվա ընթացքում առնվազն 10 տոկոսով կկրճատվի սելեկտիվ աբորտների թիվը, այսինքն՝ 10 տոկոսով կնվազի չծնված աղջիկների թիվը: Բնականաբար, շարունակական են լինելու աշխատանքները, մինչեւ էական փոփոխությունների հասնելը», – եզրափակեց Վ.Ասատրյանը:

Եվ վերջում՝ յուրաքանչյուր հղիություն պետք է ցանկալի լինի՝ անկախ նրանից՝ աղջի՞կ եք սպասում, թե՞ տղա:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Տեր լինելով՝ ծառայենք մեր քաղաքին»

էջ 2

տուկ կրթահամալիրի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հկ ցերեկային կենտրոնի, «Արծվաբույն» տարեցների կենտրոնի միջեւ եւ տնայցերով հասցվեց «Հույսի եւ հավատի օջախ» բարեգործական հասարակական կազմակերպության շահառուներին: Կապանի քաղաքապետարանը համերգ էր կազմակերպել փոքրիկների համար: Տոնական օրվա գլխավոր միջոցառումը Կապանի մշակույթի կենտրոնում էր, որտեղ կայացավ հանդիսավոր նիստ ու տոնական համերգ: Հանդիսությանը ներկա կապանցիներին, հյուրերին բարեմաղթանքի խոսքեր հղեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: **«Մաղթում եմ, որ յուրաքանչյուրիդ ընտանիքում տիրի ջերմությունը, ուրախությունը եւ լավատեսությունը վաղվա օրվա հանդեպ: Ցանկանում եմ, որ քաղաքի օրը, հիրավի, ամենասիրելի տոնը դառնա բոլոր նրանց համար, ովքեր հպարտորեն կրում են կապանցի անունը:**

Այսօր մեր համայնքում բնակվողները ամեն պահ կերտում են քաղաքի պատմությունը, եւ ձեզնից յուրաքանչյուրը, որ կատարում է իր ամենօրյա աշխատանքը, հարստացնում է հարազատ օրրանի կենսագրության էջերն իր ներդրումով: Ուստի տոնական օրը առիթ է հիշելու եւ շնորհակալություն հայտնելու նրանց, ովքեր ավանդ են ունենում Սյունիքի մարզկենտրոնի զարգացման գործում: Քաղաքի օրը առիթ է նաեւ թերթելու անցյալի էջերը, ամփոփելու կատարածը եւ ուղենշելու անելիքները», - մասնավորապես ասաց քաղաքապետը:

Շնորհավորանքի խոսք ասաց նաեւ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչէ Գրիգորյանը՝ նշելով, որ Կապանը, որ հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ արժանի հակահարված տվեց հակառակորդին՝ ամոքելով իրեն հասցված վերքերը, գնալով բարեկարգվում ու գեղեցկանում է: Կապանի օրվա կապակցությամբ մի շարք անձինք արժանացան քաղաքապետի խրախուսանքին. կրթության, մշակույթի, առողջապահության, արտադրության ոլորտի մեկ տասնյակից ավելի մարդկանց հանձնվեցին շնորհակալագրեր եւ պատվոգրեր:

Հայրենի քաղաքի կյանքում ունեցած ավանդի եւ վաստակի համար «Կապան» ոսկե հուշամեդալով պարգեւատրվեցին «Կապան» վոկալ-գործիքային անսամբլի մենակատար Մայիս Դավթյանը, Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Սամվել Պողոսյանը, Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Կամո Արզումանյանը, հետմահու՝ գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանը եւ «Ռոսիյանե» հասարակական կազմակերպության նախագահ Գալինա Աղախանյանը: «Կապանի պատվավոր քաղաքացի» կոչմանն արժանացան Ռոբերտ Էջանանցին եւ Ռուդիկ Գրիգորյանը: Հանդիսավոր նիստի ավարտին համերգային ծրագրով հանդես եկան երաժշտական կոլեկտիվներ եւ անհատ կատարողներ: Համերգն ավարտվեց «Կապան» երգով՝ կանանց երգչախմբի կատարմամբ, որ հնչեց առաջին անգամ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Նպատակը՝ որակյալ մասնագետներ պատրաստելը

էջ 2

ռարություն պետպատվերն ավելացնելու խնդրանքով՝ հաշվի առնելով տարածաշրջանի հեռավորությունը, մարդկանց սոցիալական վիճակը: Նախարարությունն ընդառաջեց, եւ արդյունքում ինը պետպատվերով տեղ ավելացավ, – տեղեկացրեց Թ.Հովհաննեսյանը եւ հավելեց, – **մենք ամեն կերպ փորձում ենք ոգեւորել ուսանողներին ոչ միայն որակյալ կրթություն տալով, այլեւ նրանց համար նպաստավոր պայմաններ ստեղծելով»:**

Տնօրենի կարծիքով՝ 2017 թվականից հիմնական կրթությամբ ընդունվածների համար ուսուցումն անվճար կլինի՝ չնայած ներկայումս մոտ 75 տոկոսն անվճար է՝ օրինակ՝ 20 տեղից 15-ը:

Այս ուստարում քոլեջից մեկ ուսանող ընդունվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ (արդեն մի քանի տարի է՝ Մեղրու տարածաշրջանից առկա ուսուցման համար մասնաճյուղ ոչ ոք չէր դիմել, այս ուստարում 4 հոգի դիմել է):

Քոլեջում դասավանդում են որակյալ մասնագետներ. **«Մնում է ցանկություն հայտնեն աշխատելու: Աշխատավարձը ցածր է, շատերը համատեղության կարգով են աշխատում»,** – նշեց տնօրենը: Հանրակրթական դպրոցի, հատկապես ավագ դպրոցի ուսուցչի ժամավճարը զգալիորեն բարձր է միջին մասնագիտական ուսումնական հաստատության դասախոսի ժամավճարից, ինչպես նաեւ քոլեջի դասախոսները չեն օգտվում սոցփաթեթից: **«Սոցիալական փաթեթից չենք օգտվում, որովհետեւ արտաբյուջե ունենք, այսինքն՝ իրականացնում ենք վճարովի ուսուցում, բայց, կարծում եմ, ժամանակի ընթացքում ե՛ւ այս, ե՛ւ աշխատավարձի հարցերը կվերանայվեն»,** – պարզաբանեց տնօրենը: Թեկուզ պիտի նշել, որ վերջին տարիներին 2-3 անգամ ավելացել է քոլեջի ֆի-

ԹԱՄԱՄ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ
Մեղրու պետական քոլեջի տնօրեն

նանսավորումը:

Կրթության ազգային ինստիտուտի «Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային կենտրոն»-ը (ՄԿՈՒԶԱԿ) պարբերաբար անց է կացնում վերապատրաստման դասընթացներ թե՛ մայրաքաղաքում, թե՛ քոլեջում: Պարբերաբար իրականացվող վերապատրաստման դասընթացները նպաստում են հատկապես նորագույն մեթոդներն արագ յուրացնելուն, մասնագիտական գիտելիքները կատարելագործելուն: Քանի որ մոդուլային ծրագրի ներդրումը միջին մասնագիտական հաստատություններում դեռեւս կատարելագործման փուլում է, հաճախակի են կազմակերպվում վերապատրաստման դասընթացներ, որին մասնակից դասախոսները տեղում նույնպես անց են կացնում վերապատրաստումներ: **«Հանուն արդարության պիտի նշեմ, որ ՄԿՈՒԶԱԿ-ը բավականին արդյունավետ գործունեություն է ծավալում՝ աջակցելով թե՛ կրթական ծրագրերով ու թե՛ նորագույն մեթոդների կիրառման ուսուցմամբ՝ դրանով նպաստելով հանրապետությունում նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության եւ մասնագիտական ուսուցման զարգացմանը,** – նշեց Թ.Հովհաննեսյանը եւ հավելեց, - **հմտություն, կարողություն ձեւավորելու առումով նորագույն մեթոդները լայն հնարավորություններ են տալիս: Կարծում եմ՝ ճիշտ ուղու վրա ենք»:**

Եվրոպական կրթական համակարգին ինտեգրումն այսօր այս օղակի առաջնահերթ խնդիրներից է: Տարածաշրջանային քոլեջներում, քանի որ դրանք ունեն հարուստ նյութատեխնիկական բազա, դասընթացներ են անցկացվում եվրոպական կրթական աջակցության ծրագրերի հիման վրա: **«Տարածաշրջանային քոլեջն այդ աշխատանքների համակարգող է: Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում վերջերս անցկացված հանդիպման ժամանակ Եվրամիության ներկայացուցչական խմբի առաջ ես հարց բարձրացրի մեր քոլեջը նյութատեխնիկական բազայով հարստացնելու եւ լաբորատորիա հիմնելու վերաբերյալ (տարածաշրջանային քոլեջի լաբորատորիաներից մեկը ես շատ եմ հավանել, եւ պայմանավորվածություն ենք ձեռք բերել այնտեղ պրակտիկա անցկացնելու համար): Իմ առաջարկին ի պատասխան՝ ծրագրի պատասխանատուները նշեցին, որ սա դեռեւս առաջին փուլն է, որտեղ կենտրոնում տարածաշրջանային քոլեջներն են: Երրորդ փուլով հավանաբար ուշադրություն կդարձնեն մեր քոլեջներին»,** – նշեց Թ.Հովհաննեսյանը:

Տնօրենից տեղեկացանք նաեւ, թե ինչպես են կարգավորվում քոլեջի շրջանավարտների եւ գործատուների՝ աշխատանքի տեղավորման հարաբերությունները: **«Նախեւառաջ կապ ենք հաստատում տարածաշրջանի գործատուների հետ՝ ուսումնական եւ արտադրական պրակտիկաներն անցկացնելով համապատասխան հաստատություններում: Բացի դրանից՝ քոլեջի կառավարման խորհրդում ընդգրկում ենք նաեւ գործատու կազմակերպությունների ներկայացուցիչների: Ես այն կարծիքին եմ, որ փորձառու ղեկավարն անպայման կնկատի խելացի ուսանողին եւ հետագայում աշխատանք կտա: Ինչ վերաբերում է գործատուին մեզ մոտեցնելուն, եթե այդպես կարելի է ասել, իմ համոզմամբ, առաջին քայլը մենք պիտի կատարենք՝ ցույց տալով մեր աշխատանքի որակը: Գործատուների մոտ իրականացվող պրակտիկաների ընթացքում է միայն հնարավոր նկատել ապագա լավ մասնագետին: Ես նպատակ եմ դրել՝ ցույց տալու քոլեջի տեղն ու դերը, եթե մի քանի տարուց չհասնեմ իմ նպատակին, ապա այն ինձ համար խնդիր կդառնա»,** – նշեց տնօրենը:

Մարզում նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը ժամանակի ընթացքում հավանաբար կավելանա, քանի որ արհեստավորների կարիք միշտ էլ կա: **«Որոշել ենք արհեստավորների պատրաստման գործում մեծ ուշադրություն դարձնել կարճաժամկետ ուսումնական ծրագրերին, այսինքն՝ տվյալ մասնագիտության համար կկազմվի պետական ծրագիր, որ հնարավորություն կտա ավելի կարճ ժամկետում յուրացնել մասնագիտությունը: Ագարակի կոմբինատի հետ պայմանավորվելուց հետո վեցամսյա կարճաժամկետ ծրագրեր կիրականացնենք այն մասնագիտությունների գծով, որոնց կարիքն ունի ձեռնարկությունը: Տեսական մասը կանցկացվի քոլեջում՝ դասապրոցեսին ներգրավելով իրենց մասնագետներին, իսկ գործնականը՝ կոմբինատում»,** – տեղեկացրեց տնօրենը:

Կարծում ենք՝ տարածաշրջանում հանքարդյունաբերության զարգացումն առաջ կբերի նեղ մասնագետների կարիք, որոնց մի մասն էլ, բնականաբար, կապահովի քոլեջը:

Ներառական կրթություն իրականացնելու համար քոլեջից չորս դասախոս վերապատրաստվել է եւ կարող է անհատական ուսումնական պլաններով իրականացնել համապատասխան ուսուցում:

Քոլեջի արտաբյուջեով վերանորոգվել եւ նախատեսում են վերանորոգել լսարանները, որի արդյունքում առաջիկա չորս-հինգ տարում բոլոր լսարանների հարցն այդ առումով կլուծվի: Հրատապ լուծում պահանջող հարցերից են նաեւ նորմալ մարզադահլիճ ունենալը, նյութատեխնիկական բազայով ապահովումը, անհրաժեշտ լաբորատորիաների ստեղծումը եւ դրանց համալրումը: Իսկ նպատակը, ինչպես արդեն նշեցինք, որակյալ մասնագետներ պատրաստելն է:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դա մեռածներին պետք չէ բնավ, իսկ ապրողներին շատ է հարկավոր

էջ 1

անձնական քարտում գրված էր, որ հավատարիմ իր երդմանը, դրսեւորելով արիություն ու հերոսություն, զոհվել է Մալգոբեկ քաղաքի պաշտպանության համար: Զոհվածի եղբոր՝ Հուսիկ Հարությունյանի, որդին՝ Արմեն Հարությունյանը, խնդրեց Կապանի զինկոմ Լեոնիդ Գրիգորյանին կապ հաստատել Մալգոբեկ քաղաքի հետ, որոշ տեղեկություններ քաղել Սավադ Մարտիրոսյանի՝ այդտեղ զոհվելու, հուղարկավորության եւ գերեզմանի առկայության մասին, ինչն արվեց եւ հաստատվեց: Որից հետո որոշվեց մեկնել Ինգուշեթիայի այդ քաղաքը:

Հաջորդ քայլն այն էր, որ պատվիրակություն (զինկոմ Լեոնիդ Գրիգորյան, Կապանի բժշկական քոլեջի տնօրեն Ռոմիկ Սարգսյան, Արմեն Հարությունյան) կազմվեց, որը սեպտեմբերի 7-ին մեկնեց Ինգուշեթիայի հանրապետության Մալգոբեկ քաղաք: Մինչեւ տեղ հասնելը Մինվոդիում խմբին դիմավորեցին եւ միացան ռուսաստանաբնակ կապանցիներ, վաստակաշատ կամրջաշինարար Լյուդվիգ Սարգսյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Հովիկ Բունիաթյանը: Պատվիրակությունը Մալգոբեկի զինկոմիսարիատում պատշաճ ընդունելության արժանացավ, որին մասնակցում էին Մալգոբեկի վարչական շրջանի ղեկավար Շարպուտին Մամիլովը, զինկոմ Միխայիլ Գանդալոեւը, տեղական թերթի խմբագիր Ախմեդ Կուլտոեւը, քաղաքային դումայի պատգամավոր Օսման Եվլոեւը, «Եդինայա Ռոսիա» կուսակցության տեղական կառույցի ղեկավարը, հասարակական կազմակերպության անդամներ, մասնավորապես ռազմահայրենասիրական կենտրոնի տնօրենն ու տեղակալը եւ ուրիշներ:

Բոլորը ոգեւորված էին այցից, գալիս ծանոթանում էին կապանցիների հետ, մեծերից լսած հուշեր պատմում իրենց քաղաքի համար մղված մարտերի մասին: Իսկ դրանք արյունալի էին եւ բախտորոշ: 1942թ. աշնանը թշնամին հարձակվեց Մալգոբեկի վրա: Այդ ոչ մեծ քաղաքի գրավումով ֆաշիստական զորքերի համար ճանապարհ էր բացվում դեպի Գրոզնու եւ Բաքվի նավթային պաշարները: Խորհրդային զորքերը պաշտպանեցին քաղաքը, այնուհետեւ հետ շպրտեցին հակառակորդին, ինչում մեծ ավանդ ունի 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան (հետագայում՝ Թամանյան): Այդ վճռորոշ մարտերը վերջինը եղան դիվիզիայի շատ մարտիկների համար, այդ թվում եւ Սավադ Մարտիրոսյանի: Նրա աճյունն ամփոփված է Մալգոբեկի թիվ 2 եղբայրական գերեզմանոցում, հայազգի 53 մարտիկ է ննջում այդ գերեզմանոցում: Պիտի փաստել, որ Մալգոբեկի մարտերում է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան մարտական մկրտություն ստացել, այնուհետեւ մարտերով հասավ Բեռլին, եւ ազգային դիվիզիաներից միակն էր, որ մարշալ Ժուկովի ընտրությամբ մասնակցեց ֆաշիստական որջի գրոհին եւ գրավմանը:

Զինկոմիսարիատում ընդունելությունից հետո պատվիրակությունը հյուրընկալողների հետ ուղղություն վերցրեց դեպի Մեծ հայրենականում ընկած մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձան, որի վրա նահատակ 335 զինվորի շարքում փորագրված է Սավադ Մարտիրոսյանի անուն-ազգանունը:

Հարգանքի տուրք մատուցվեց կապանցի մարտիկի հիշատակին: Այստեղ եւս մալգոբեկցիներն անընդհատ պատմում էին այդտեղ մղված մարտերի մասին, նաեւ տեղեկացնում, որ Մալգոբեկը՝ Ռուսաստանի Դաշնության 45 քաղաքից մեկը, կրում է «Ռազմական փառքի քաղաք» կոչումը: Քաղաքը երեք ամիս գտնվում էր պաշարման մեջ, նրա պաշտպանության համար զոհվել է 120 հազար

Սահմանադրական բարեփոխումներին ընդառաջ

Տեսակետ

Մինչեւ բուն թեմային անցնելը կցանկանայի անդրադառնալ մի իրադարձության, ինչը, առայժմ, իմ կարծիքով, դեռեւս պատշաճ գնահատական չի ստացել: Խոսքը «Սյունյաց երկրի» հատուկ թողարկումներից մեկի մասին է, որն ամբողջությամբ նվիրված էր Ամենայն Հայոց 101-րդ կաթողիկոս Տ.Տ. Մովսես Գ Խոտանանցու (Տաթեւացու) կյանքին ու գործունեությանը: Հիրավի, դա մի եզակի գիտական աշխատություն էր մեր սուրբ հայրերից մեկի վերաբերյալ, ինչի համար կցանկանայի որպես խոտանանցի եւ պարզապես հայ քրիստոնյա իմ երախտագիտությունը հայտնել «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանը եւ գլխավոր խմբագիր պարոն Ալեքսանյանին: Վստահ եմ, որ հենց սրբերի դասին կարգված մեր հայրերը պետք է լինեն հասարակ մահկանացուներիս երկրային ուղին լուսավորող եւ ուղղորդող աստղը: Հուսով եմ, որ մոտակա ժամանակահատվածում գիտական մակարդակով լուրջ անդրադարձ կկատարվի Սյունյաց աշխարհի ամենաերեւելի զավակներից մեկի՝ Սուրբ Մովսես Խոտանանցու թողած ժառանգությանը, ինչը կլինի այն աստվածահաճո քայլերից մեկը՝ ուղղված մեր հասարակության հոգեւոր կրթմանն ու դաստիարակմանը, իրական արժեքների ձեւավորմանը:

Այս օրերին Հայաստանի Հանրապետության քաղաքական անցուդարձում թերեւս ամենաքննարկվող թեմաներից մեկը գալիք հանրաքվեն է՝ սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ: Անշուշտ, դա մի իրադարձություն է, որը կարող է մեծապես ազդել երկրի հետագա զարգացման վրա, եւ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի չէի կարող անմասն մնալ այդ քննարկումներից: Քաղաքական գործիչների բազմաթիվ տեսակետներն ու հարցադրումները կարելի է դասակարգել երկու հիմնական խմբում.

ա) մասնակցե՞լ հանրաքվեին, թե՞ ոչ,

բ) եթե մասնակցել, ապա կո՞ղմ քվեարկել, թե՞ դեմ:

Առաջին հարցադրումն արտահայտելն իսկ զարմանք է առաջացնում, քանի որ ինչպե՞ս կարող է իրեն քաղաքական գործիչ կամ ակտիվ քաղաքացի համարող անձը կոչ անել չմասնակցել պետության համար այդքան կարեւոր իրադարձությանը: Փաստորեն, դրանով կոչ է արվում անտարբերություն դրսեւորել սեփական հայրենիքի ապագայի նկատմամբ: Շատ հեշտ է ոչինչ չանել եւ միայն անպատասխանատու քննադատություններ հնչեցնել: Անտարբերությունը, սեփական կարծիքը չհայտնելը թույլ, անդեմ, մարգինալ անձի դրսեւորում է, ինչն ազնիվ չէ, եւ հետեւաբար դժվար է բարոյական համարել: Ուստի, միանշանակ պետք է մասնակցել գալիք հանրաքվեին եւ դրանով ստանձնել պատասխանատվության սեփական (թեկուզ փոքրիկ) բաժինը մեր երկրում տեղի ունենալիք հետագա զարգացումների համար:

Անդրադառնամ երկրորդ հարցադրմանը: Տվյալ դեպքում եւս հարկավոր է առաջնորդվել պարզ, առողջ տրամաբանությամբ: Դեմ արտահայտվողներից շատերն իրենք ոչ վաղ անցյալում առաջարկվող փոփոխությունների ակտիվ ջատագովներն էին. պետության պառլամենտական կառավարում, 100%-անոց համամասնական ընտրակարգ, ընդդիմության՝ որոշակի չափով պետության կառավարմանը երաշխավորված մասնակցություն եւ այլն: Ապա ինչո՞ւ են կտրուկ կերպով փոխվել մարդկանց դիրքորոշումները: Թվում էր, թե իրեն «դեմոկրատ» համարողը պետք է միայն ու միայն ողջուներ առաջարկվող փոփոխությունները (ինչը, իմիջիայլոց, միաձայն արեց Վենետիկի հանձնաժողովը), բայց՝ ոչ, դեմ ենք: Հետեւելով տարաբնույթ բանավեճերին՝ գալիս ես եզրակացության, որ խնդիրն անձերի մեջ է եւ ոչ թե գաղափարախոսության: Որքա՜ն ենք մենք սիրում անձնավորել ցանկացած երեւույթ: Միգուցե հենց դա՞ է խնդիրը, միգուցե հենց ա՞յդ պատճառով է, որ մեր հայրենիքում դեռեւս կան այսքան չլուծված խնդիրներ, իսկ հասարակության համախմբումը մինչ այժմ մնում է բարեմաղթանքի կարգավիճակում: Վերջիվերջո, պետք է գիտակցել, որ գործող սահմանադրությամբ իշխանության վերարտադրությունն ավելի հեշտ է իրականացնել, որի դեմ պայքարում են այսպես կոչված «ժողովրդավարները»: Անձամբ ես առաջարկվող սահմանադրության նշանակալից նվաճում եմ համարում այն, որ պետության համար կարեւորագույն որոշումները կընդունվեն կոլեգիալ եղանակով եւ ոչ թե միանձնյա, ինչով զգալիորեն նվազեցվում են սխալ որոշումներ ընդունելու ռիսկերը: Կնշեի եւս մի կարեւոր բարեփոխում: Գործող սահմանադրությամբ ուղղակի քվեարկությամբ ընտրվում են ե՛ւ նախագահը, ե՛ւ խորհրդարանը, եւ ստացվում էր այնպես, որ երկուսն էլ ունեն ժողովրդի քվեն: Դա նույնպես իր մեջ վտանգներ է պարունակում՝ հատկապես իշխանության այդ երկու թեւի միջեւ տարաձայնություններ առաջանալիս: Առաջարկվող փոփոխություններով դա այլեւս անհնար է: Բավականին դրական փոփոխություններ կան կառավարության յուրաքանչյուր անդամի պատասխանատվության բարձրացման հարցում (խորհրդարանն իրավունք ունի անվստահություն հայտնել առանձին որեւէ նախարարի), դատական իշխանությունն ավելի անկախ է՝ սկսած իր ձեւավորման փուլից, մտցվել է «կայուն մեծամասնություն» հասկացությունը, ինչն աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում գտնվող մեր տարածաշրջանի պայմաններում կանխարգելում է իշխանության վակուումի առաջացման հնարավորությունը եւ ապահովում պետության անխափան կառավարումը: Պետական կառավարման մի շարք այլ գործընթացներում առավել հստակ են մատնանշվում կատարողներն ու պատասխանատուները՝ երաշխավորված կարգով նաեւ ընդդիմությանը մասնակից դարձնելով: Կարեւոր եմ համարում նաեւ այն փաստը, որ հոդված 18-ով մատնանշվում է «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»: Ուրախալի է, որ հոդված 30-ում խոսվում է «կանանց եւ տղամարդկանց», եւ ոչ թե անընդունելի «գենդերային» հավասարության մասին: Կան եւս բազմաթիվ այլ դրական փոփոխություններ, որոնք թերեւս մասնագիտական վերլուծության կարիք ունեն:

Չէի ցանկանա, որ այնպիսի տպավորություն ստեղծվեր, թե ամեն ինչ է ինձ, որպես ՀՀ քաղաքացու, բավարարում առաջարկվող նախագծում: Մասնավորապես, հոդված 16-ում ընտանիքի պաշտպանության մասին խոսելիս լավ կլիներ նախ տալ «ընտանիք» հասկացության սահմանումը, որը պետք է հիմնված լինի ընտանիքի մեր ավանդական, ազգային պատկերացումների վրա: Դա կկանխարգելեր արեւմտյան մի շարք այլասերված պատկերացումների հնարավոր ներթափանցումը մեր հայրենիք: Հոդված 17-ում կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը երաշխավորելիս այն կպայմանավորեի ազգային անվտանգության հետ: Համաձայն չեմ նաեւ 100%-անոց համամասնական ընտրակարգին: Այն որոշակիորեն նվազեցնում է կոնկրետ պատգամավորի պատասխանատվությունն ընտրողների առաջ, հնարավորություն տալիս կուսակցություններին իրենց ցուցակներում ավելի շատ ընդգրկել անձանց, ովքեր այնքան էլ չեն համապատասխանում տվյալ կուսակցությունների կողմից հռչակվող գաղափարախոսությանը: Մեծամասնական կարգով ընտրված պատգամավորին ընտրողը գիտի, ճանաչում է, եւ նա շատ ավելի հասանելի է յուրաքանչյուր քաղաքացու եւ պատասխանատու նրա առաջ: Կարծում եմ՝ այստեղ մենք ծայրահեղությունից ծայրահեղության ենք դիմում:

Ինչեւէ, ինչպես եւ յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ, պետությունը եւս ունի էվոլյուցիոն զարգացման անհրաժեշտություն, եւ առաջարկվող սահմանադրական բարեփոխումները դիտարկում եմ հենց այդ տեսանկյունից: Կարծում եմ՝ բոլորիս պարտքն է ակտիվորեն եւ մեր խղճին համապատասխան մասնակցել այդ փոփոխություններին՝ լինելով ազնիվ եւ պատասխանատու մեր գործողություններում:

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԴԱԼՅԱՆ

Վ.Խոտանանի միջ. դպրոցի տնօրեն

Ո՞վ պիտի բռնի ապօրինի ծառահատողի ձեռքը

«Օրհուս» բնապահպանական կենտրոնում հոկտեմբերի 8-ին տեղի ունեցավ հանրային քննարկում, որ վերաբերում էր Սյունիքի «Շիկահող» պետական արգելոցի եւ նրան հարող տարածքներում իրականացվող ապօրինի ծառահատումներին: Սյունիքի անտառներում ծառերի ջարդի մասին ահազանգ է հնչեցրել Համահայկական բնապահպանական ճակատը՝ համացանցում տեղադրելով ապօրինի ծառահատումների վերաբերյալ լուսանկարներ: Քննարկման մասնակիցներն արտահայտեցին իրենց դիտարկումները եւ նկատառումները: Նշվեց, որ հատուկ պահպանվող տարածքներում ոչ մի տեսակի ծառահատում չի թույլատրվում: Անտառահատում թույլ է տրվում միայն առանձնացված հատատեղերում: Անտառահատումները չպիտի գերազանցեն տարեկան վերաճի սահմանը:

Հընթացս նշվեց, որ ոչ միայն բուսական, այլեւ կենդանական աշխարհին էլ է անդառնալի կորուստ պատճառվում: *«Որ ռեստորան ու խորտկարան մտնում ես, քեզ որսի միս են առաջարկում, բայց ոչ մեկը չի հետաքրքրվում՝ թե որտեղից...* – ահազանգ հնչեցրեց «Խուստուփ» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ Վլադիկ Մարտիրոսյանը, - *կար ժամանակ, որ մեր գետերն իրենց ձկնառատությամբ ակվարիում էին հիշեցնում, հիմա մի կարմրախայտ չես գտնի»:*

Հատված ծառերի տարածքների պատկանելությունը ճշտելու նպատակով հաջորդ օրը մասնագիտական խումբը, որի կազմում էին «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ»-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը, Հայկական բարձրավանդակի կենսաբազմազանության պահպանման հիմնադրամի տնօրեն Արթուր Կարապետյանը, «Խուստուփ» բնապահպանական հկ-ի նախագահ Վլադիկ Մարտիրոսյանը, «Օրհուս» բնապահպանական կենտրոնի համակարգող Աշոտ Ավագյանը եւ այլք, եղան «Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետարգելոցում, որտեղ էլ հիմնականում իրականացվել էին ծառահատումները: *«Երբ տեղ հասանք, մեր առջեւ մի տխուր պատկեր բացվեց. 2000 քմ չափով անտառը կտրտած-թափած էր՝ եւ կաղնիներ, եւ բոխիներ, Ծավ-Մեղրի ճանապարհի մոտ եւս առանձին ծառեր էին հատվել, կտրտել, պատրաստել էին, որ տեղափոխեն: Անբարենպաստ եղանակը թույլ չտվեց խորանալու անտառի խորքը, հաստատ համոզված եմ, որ այդտեղ էլ նման պատկերի ականատես կլինեինք, որովհետեւ նոր բացված ճանապարհ էր երեւում,* - այցի մասին «Սյունյաց երկրին» իր տպավորությունները փոխանցեց Արթուր Կարապետյանը:

Հստակ պատկեր ստանալուց հետո մասնագիտական խումբը նամակով դիմել է ՀՀ բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարներին, ՀՀ գլխավոր դատախազին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Զինվոր ու սպա, դեռ ավելին՝ տեղացիները Մալգոբեկի ճակատամարտի համեմատում էին Ստալինգրադի պաշտպանության հետ: Հյուրընկալողներն իրենց զրույցներում անընդհատ անդրադառնում էին 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մարտիկների սխրագործություններին: Իսկ տեղի Մարտական փառքի թանգարանի տնօրենը եղբայրական գերեզման էր եկել՝ կրծքին սեղմած դիվիզիայի հրամանատար, գնդապետ Արտաշես Վասիլյանի դիմանկարը, ով զոհվեց 1943 փետրվարին: Հուշարձանի մոտ տեղի ունեցած արարողությունը հեռակապի միջոցով դիտում էր Հուսիկ Հարությունյանը, ով առաջացած տարիքի պատճառով չկարողացավ այցելել եղբոր գերեզմանին:

Մալգոբեկցիները չեն մոռանում հայ հերոսներին, փողոցներից մեկը կրում է Արտաշես Վասիլյանի անունը, պատանեկան կազմակերպությունները կրում են հայ մարտիկների անունը:

Զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը մի դրվագ ներկայացրեց մալգոբեկյան հանդիպումներից. **«Երբ բարձրանում էինք դեպի հուշակոթողը, տեսա, որ առաջին աստիճանից մինչեւ վերջ բետոնը ջարդվել, մեծ ճաք էր գոյացել: Տեղացիները փոխանցեցին, թե անցյալ տարի են նորոգել, բայց նորից ճաք է առաջացել: Ասացի, որ պետք չէ այլեւս փակել, հարցրեցին՝ ինչո՞ւ, պատասխանեցի, որ ինչքան էլ փակեք, զոհվածների հոգիները ներսից պատռելու են: Ինչպես երեւաց, ասածս ներգործություն ունեցավ»:**

Ի դեպ, Լեոնիդ Գրիգորյանը ռազմական արխիվից հանել է Մալգոբեկի համար զոհված հայազգի մարտիկների անուն-ազգանուն-հայրանունները եւ պատրաստակամություն է հայտնում օգտակար լինել նրանց, ովքեր հետաքրքրված են Մեծ հայրենականում զոհված իրենց հարազատի ճակատագրով: Գուցե մի ընտանիք էլ հոգեկան հանգստություն գտնի՝ ստույգ իմանալով պատերազմում զոհված իր հարազատի գերեզմանի տեղը: **«Որպեսզի մարդիկ իմանան, որ ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»,** – ասում է զրուցակիցս եւ հավելում, որ այնտեղ մեծ ուշադրություն են դարձնում իրենց քաղաքի ազատագրության համար զոհված մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանների տարածքի մաքրությանն ու խնամքին:

Կապանի պատվիրակությունը եղավ Մալգոբեկի Մարտական փառքի սրահում, որի ցուցանմուշների մի զգալի մասը պատմում է 89-րդ հայկական հրաձգային Թամանյան դիվիզիայի, նրա մարտիկների մասին: Հերոսների շարքում փակցված էր Հունան Ավետիսյանի դիմանկարը՝ նրա սխրանքի մասին պատմող տեքստով: **«Այդ ամենը հպարտության զգացում էր առաջացնում մեր մեջ»,** – ասաց Ռոմիկ Սարգսյանը - **այցը բավականին տպավորիչ էր, տեսնել էր պետք, թե ինչպես են այնտեղ հարգում ու մեծարում իրենց հարազատ քաղաքի մատույցներում կռված ու զոհված մարտիկներին, եւ բնավ էլ խտրություն չէին դնում, թե այդ տղաները որ ազգին են պատկանում: Կարեւոր էր նաեւ, որ նոր կապեր հաստատեցինք եւ մեզ հյուրընկալողներին առաջարկեցինք այցելել Կապան»:**

Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից, գումարտակի հրամանատար, այնուհետեւ թիվ 97 բրիգադի հրամանատարի տեղակալ Լեոնիդ Գրիգորյանի հետ մեր հանդիպման ժամանակ անդրադարձ եղավ մերօրյա պատերազմին: Նրա փոխանցմամբ՝ 2006 թվականից սկսած մարտական ընկերներով հանդիպում են, գումարտակի օրը նշելով, այցելում են գումարտակի զոհված մարտիկների գերեզմանները: Իսկ երթուղին սկսվում է Կապանից, շարունակվում Իջեւան, Դիլիջան, Մասիս, Թալին, Արմավիր բնակավայրերով եւ ավարտվում Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ լեյտենանտ Մարտիրոս Հայրապետյանի գերեզմանին ծաղկեպսակ դնելով եւ հարգանքի տուրք մատուցելով: Գումարտակի զոհված երկու զինվորի գերեզմանին զինկոմի նախաձեռնությամբ շիրմաքար է տեղադրվել, կարելի է ասել՝ գումարտակի զոհված տղաների ընտանիքների հետ ջերմ, հարազատական կապեր են ստեղծել, կարելվույն չափով ձգտում են սատար լինել ընտանեկան խնդիրների լուծմանը: Այս ամենը Լեոնիդ Գրիգորյանը դիտարկում է բանակ-հասարակություն կապի ամրապնդման շրջանակում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Անդոկ Սյունին» միավորում է ուսանողությանը

Օգոստոսին թերթի խմբագրակազմն արձակուրդում էր, բնականաբար, որոշ իրադարձությունների չկարողացանք անդրադառնալ, որոնք ավանդաբար տեղի են ունենում ամռան վերջին ամսին: Ուսանողությանը միավորող, նրանց ժամանցը կազմակերպելու ազդակ են ուսանողական փառատոները: 2006թ. նման փառատոն անցկացվում է Քաջարանում: Նախաձեռնողը եւ կազմակերպողը «Անդոկ Սյունի» զարգացման հասարակական կազմակերպությունն (հկ) է, որի համահիմնադիր Արտակ Աբրահամյանը պատմում է թե՛ հկ-ի, թե՛ այս անգամվա ուսանողական փառատոնի մասին:

Երկու տարվա պատմություն ունի «Անդոկ Սյունի» հասարակական կազմակերպությունը (հիմնադրվել է 2013թ. հունվարի 5-ին), բայց Ա.Աբրահամյանի համոզմամբ՝ դրա հիմքերը դրվել են 2006 թվականին, երբ սկսել են պարբերաբար Քաջարանում երիտասարդության համար միջոցառումներ կազմակերպել, մասնակցել մարզային միջոցառումների, խրախուսվել: *«Անդոկ Սյունի» հկ կորիզը վաղուց ձեւավորված ունեինք,* – մասնավորեցնում է մեր զրուցակիցը, ում փոխանցմամբ՝ կազմակերպությունը մոտ վաքսուն անդամ ունի եւ մշտապես սատարվում է Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենության կողմից:

«Որքան մեծ լինի ուշադրությունը «Անդոկ Սյունի» հկ-ի հանդեպ, այնքան շատ ու բազմազան կլինեն միջոցառումները, այնքան կշահի երիտասարդությունը, – սա կազմակերպության համահիմնադրի համոզմունքն է, ապա հավելում է, – *պարբերաբար մի փայտ ավելացնելով կրակին, այն ավելի կթեժանա, ստեղծել ենք կազմակերպության կորիզը, նախաձեռնող երիտասարդներ կան, պիտի այնպես արվի, որ չցրվեն»:* Այս համատեքստում էլ կես-լուրջ, կես-կատակ ասում է. «Սյունեցի լինելը պատիվ է, քաջարանցի լինելը՝ տիտղոս»:

«Ուսանողական ամառ» փառատոնի բացումը տեղի ունեցավ օգոստոսի 11-ին, միջոցառման մասնակիցներին բարեմաղթանքներ հղեցին համայնքի ղեկավար Վարդան Գեւորգյանը, Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, ով երկարակեցություն մաղթեց «Անդոկ Սյունի» հկ-ին. «Տա Աստված, որ երկամյա մանուկը դառնա զառամյալ ծերունի»:

- Յուրաքանչյուր տարի «Ուսանողական փառատոնի» շրջանակում անցկացված միջոցառումների շարքը սկսվում է Արցախյան գոյամարտում զոհված քաջարանցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրից, որտեղ մերօրյա նահատակների հիշատակին հարգանքի տուրք մատուցելուց հետո անցկացվում է սանիտարական ժամ, կարգի ենք բերում ուխտատեղին, – պատմում է Ա.Աբրահամյանը, - *ի դեպ,*

էջ 8

Ֆերմերը

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Ֆերմեր» օտարածին բառն անցած դարի 20-ական թվականներից սկսած դարձել էր մեր լեզվում արմատացած «մենատնտես», «կուլակ» բառերի հոմանիշը, իսկ այս բառերն էլ խորհրդային պետության, իշխանության թշնամու հոմանիշներ էին: Ֆերմեր, կոմերսանտ, բիզնեսմեն բառերը մարդկանց մեջ բացասական զգացողություն էին առաջացնում:

Մեկին վիրավորելու համար ասում էին՝ կուլակ, կուլակի տղա, կամ էլ «կամերսանտ» պիտակը կպցնում:

Իմ պատմության հերոսը Գորիսի տարածաշրջանում լավ հայտնի շրջկոոպի Վարդգեսի չորս զավակներից մեկն է՝ Արզումանը: Վարդգեսը զոհվեց Արցախյան շարժման սկզբներին՝ Քարաշեն-Խանաձախ ճանապարհի վրա: Հայտնի բան է, դժբախտությունը մենակ չի գալիս. դեռ ծանր կորստի յոթը չլրացած, հայտնվեցին մարդիկ, ովքեր հայտարարություններ արեցին, թե իբր Վարդգեսը նրանց մեծ գումարներ է պարտք: Բայց իրականում ճիշտ հակառակն էր, տասնյակները հենց իրենք էին պարտք զոհվածին: Այս մասին գիտեին ոչ միայն հանգուցյալի հարազատները, այլ նաեւ համագյուղացիներից շատերը:

Ասում են՝ դժվարությունները երեխաներին ստիպում են արագ մեծանալ: Օհանյանների ընտանիքի պարագային սա միայն թեւավոր խոսք չէր: Եթե մի պահ մտովի տեղափոխվենք 90-ական թվականների Հայաստան՝ պատկերը պարզ կլինի: Տան սյունը կորցրած ընտանիքը դիմակայեց դժվարություններին: Ինչեւէ, բարեկամների, հարազատների օգնությամբ ընտանիքը ոտքի կանգնեց:

Արզումանը չորս երեխաներից ամենակրտսերն էր: Խորհրդային բանակում զինվորական ծառայությունն ավարտելուց հետո 1990թ. վերադառնում է հայրենի գյուղ եւ 91-ին ամուսնանում Արտուշ Ավետիսյանի դուստր Արեւիկի հետ: Նորահարսն իր հետ հույս ու լույս է բերում: 1992թ. ծնվում է առաջնեկը՝ Վարդգեսը, 1994թ.՝ Վիտալին: Երրորդը 12 տարեկան Իզաբելան է՝ բոլորի սիրելին:

Ժողովուրդն ասում է՝ վաղ ծնված գառը երկու մոր կաթ է ուտում: Արզումանի առնական տղաներն այսօր թեւ եւ թիկունք են իրենց հորը, աշխատանքի ամբողջ ծանրությունը կարողանում են իրենց երիտասարդ ուսերին տանել: Իսկ աշխատանքն, իրոք, ծանր է, համբերություն պահանջող:

Վարդգեսի տնտեսական գործունեությունը սկսվեց այսպես. ազգակից Միշայի խորհրդով Արզումանը նրան հանձնեց ունեցած ամբողջ «անասնագլխաքանակը»՝ թվով 2 մայր ոչխար: Ավելին չուներ: Ինչպես ընդունված է ասել՝ այդ երկու ոչխարով նրա ընտանիքի համար ոչ տաք էր, ոչ էլ ցուրտ: 2002թ. Միշան Արզումանին վերադարձրեց նրա սեփականություն ոչխարի փոքր հոտը՝ 35 մայր եւ երկու խոյ:

Արզումանը որպես անհատ ձեւավորվել է խորհրդային կարգերի օրոք: Հայտնի բան է, խորհրդային մարդկանց ճնշող մեծամասնությունը մտածում էր այսպես՝ ինչո՞ւ իր հարեւանը լավ է ապրում, եւ ամեն ինչի դիմում, որպեսզի նա էլ իր նման վատ ապրի: Արզումանն արագ ձերբազատվեց նման մտածելակերպից. նպատակը հստակ էր. օգտագործելով իր հնարավորությունները, չհրաժարվելով ոչ մեկի օգնությունից ոչխարի գլխաքանակը հասցնել 250-ի: Համառ, ամենօրյա քրտնաջան աշխատանքը, կնոջ, երեխաների հավատն իր նկատմամբ, հարազատների աջակցությունը սպասված պտուղները տվեցին: Այսօր արդեն կայացած ֆերմեր Արզուման Օհանյանի ոչխարի հոտում 500 մայր կա՝ 18 խոյի հետ:

Այո, Արզումանը լսում, ականջալուր է լինում տրվող խորհուրդներին, բայց դրանք բոլորը չէ, որ օգտագործում է պրակտիկ աշխատանքում: Այսպես՝ նրա հարեւան ֆերմերներից շատերը խոյերը տարին կլոր պահում են մայրական հոտում՝ իբր շատ գառներ ստանալու, ասել է թե գերշահույթ ստանալու նպատակով: Արզումանը վաղուց է համոզվել, որ նման աշխատառճն արագ ծերացնում է մայրական կազմը, ստացված սերունդը լինում է վտիտ, հիվանդոտ: Այստեղ վնասն ավելի շատ է, քան օգուտը:

Արզումանը խոյերը մայրական հոտին է խառնում գարնանը, մոտավորապես մեկ ամիս, որից հետո առանձնացնում: Նա պարտադիր կարգով ստանում է միայն աշնան ծին: Որպես կանոն դեկտեմբեր ամսին նրա հոտում ծինն ավարտված է լինում: Այս տարի 100 մայրից նա ստացել է 130 գառ:

Մի ուրիշ խորհուրդ էլ է նա անտեսել: Շատ են փորձել համոզել Արզումանին գոնե 10-15 օր կթել ոչխարը՝ լրացուցիչ եկամուտ ստանալու համար, ասելով, թե ավել փողը փոր չի ծակի: Արզումանն անտեսել է նման խորհուրդը՝ ակնարկված եկամուտը նմանեցնելով քամու բերած դարմանին:

Նա սերտ կապերի մեջ է տարածաշրջանի անասնաբուժական եւ անասնաբուժական ծառայությունների հետ: Որպես կանոն անասնագլխաքանակի հիվանդությունները կանխարգելելու նպատակով գարնանը եւ աշնանը ախտահանվում են: Աշխատանքի նկատմամբ նման մոտեցման շնորհիվ է, որ Արզումանի խնամած գառները 6-7 ամսականում ունենում են 45-50 կգ կենդանի քաշ: Քարաշենում (ինչու միայն այնտեղ) ոչխարաբուծությամբ զբաղվող ոչ բոլոր ֆերմերները կարող են հպարտանալ նման ցուցանիշով: Ընթացիկ տարում նման քաշով հանձնել է 350 գլուխ գառ: Մի քիչ վերապահումով փորձում ենք իմանալ, թե մեկ գլուխ գառն ինչքան եկամուտ է բերում նրան: Ասում է, որ թաքցնելու բան չունի, գառը վաճառել է 35 հազար դրամով:

Արզումանի հետ զրույցի ընթացքում ավելի ու ավելի եմ համոզվում, որ որեւէ մասնագիտական կրթություն չունեցող այս մարդն իր փոքր տնտեսությունը վարում է գիտականորեն, իր բոլոր կամ համարյա բոլոր ձեռնարկումները տնտեսապես հիմնավորված են: Կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ աշխատանքներում երբեք խնայողություններ չի անում, պարբերաբար հետաքրքրվում է այդ բնագավառի նորություններով: Իսկ ի՞նչ աջակցություն է ստանում պետական կառույցներից, համարյա ոչինչ: Օգնություն կարելի է համարել թերեւս ամառային եւ ձմեռային արոտատեղերը վարձավճարով տրամադրելը:

Մի առիթով մեր լրագրի էջերում խոսել ենք բրդի իրացման պրոբլեմի մասին: Անցել է մեկ տարի: Հետաքրքրվում ենք, թե ինչ փոփոխություններ կան, ոչ մի: Ինքը կարողացել է այս տարվա խուզից ստացած 1500կգ բուրդը իրացնել 1կգ-ը 500 դրամով եւ գոհ է դրա համար:

Մտորելու համար ասենք, որ միջազգային շուկայում այդ գինը 10 անգամ ավելի բարձր է: Առաջվա նման ոչխարաբուծությամբ զբաղվող ֆերմերները խուզից հետո անլուծելի խնդրի առաջ են կանգնում՝ ի՞նչ անել բուրդը: Որոշ դեպքերում դրա ոչնչացումն էլ են ելք համարում: Իմ զրուցակիցը մի արտառոց դեպք պատմեց. ֆերմերներից մեկը խուզն ավարտելուց հետո շատ դռներ է ծեծում բուրդն ամենաչնչին գնով իրացնելու համար, բայց ապարդյուն: Հուսահատված մարդը մոտ երկու տոննա բրդի վրա բենզին է լցնում եւ վառում: Այստեղ էլ վրա են հասնում շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով զբաղվողները եւ մի կլորիկ գումարով տուգանում նրան: Ճիշտ եւ ճիշտ Աբու Հասանի մաշիկների պատմությունն է:

Ֆերմերի համար հուլիս-օգոստոս ամիսները համեմատաբար հանգիստ շրջան է: Պատրաստվում են խորհրդային շրջանից ժառանգություն ստացած հովվի օրվա տոնակատարությանը: Մեզ հրավիրում է մասնակցել տոնին: Խոստանում ենք գնալ:

Շարունակում ենք զրույցը: Տարիներ առաջ Հայաստանի կառավարության նախագահի տեղակալ Ալեքսան Կիրակոսյանը Խորհրդային Միության պատվիրակության կազմում լինում է Կանադայում: Այդ գործուղման ծրագրում նախատեսված է լինում այցելություն տեղի ֆերմերներին: Գորիսի շրջանի տնտեսական ակտիվի համար կարդացած դասախոսության ժամանակ նա պատմեց, որ իրեն հյուրընկալած ֆերմերը զբաղվում էր խոշորի մսի արտադրությամբ: Նրա ֆերմայում կար 300 խոշոր:

Հասկանալի է, որ Կանադայի ֆերմերի տնտեսության մեջ շատ բան է զարմացնում նրան, բայց ամենազարմանալին լինում է այն, երբ ֆերմերի որդին հորից ավտոմեքենայի բանալին է խնդրում՝ տան համար հարեւան ֆերմերից 5 լիտր կաթ բերելու համար: Հյուրն իր զարմանքը չի կարողանում թաքցնել: Տանտերը բացատրում է, որ ֆերմայում ընտանիքի կարիքների համար մեկ կթու կով պահելը տնտեսապես ձեռնտու չէ: Նախ դրա համար պետք է պայմաններ ստեղծի, կթի սարք ձեռք բերի, խնամող առանձնացնի: Հետո էլ այդ կովն օրական ամենաքիչը տալու է 15 լիտր կաթ: Ի՞նչ անի մնացած 10 լիտրը: Չէ, ձեռնտու չէ:

Այսքանը պատմում եմ Արզումանին ու հետն էլ հարցնում նրա կարծիքը: Երեխայի նման քթի տակ ժպտում է: Պարզվում է, որ մի քանի տարի շարունակ ինքն էլ հոտի հետ 3-4 կով էր պահում, հոտի հետ իջեցնում ձմեռային արոտատեղ՝ ազատագրված տարածքներ, իսկ ամռանն էլ բարձրացնում ամառային արոտատեղ: Արդեն մի քանի տարի է՝ հրաժարվել է կով պահել: Տնտեսապես ձեռնտու չէ, խանգարում է հիմնական աշխատանքին: Ընտանիքին անհրաժեշտ կաթն ու կաթնամթերքը ձեռք է բերում Կանադայի ֆերմերի օրինակով: Իսկ թե ապագայի համար ինչ ծրագրեր ունի՝ դա էլ գաղտնիք չէ: Պատրաստվում է հայրենի գյուղում բացել սուպերմարկետ: Տարակուսում եմ, որ իր գործի մեջ հմտացած մարդը նման կտրուկ որոշում է կայացնում: Իր ձեւով փարատում է իմ կասկածամտությունը: Գաղափարը հանկարծակի չի ծնվել, բայց մտածել էր, թե ժամանակի հետ կանցնի, բայց չէ, չի անցնում: Աչքին ցավ է պատճառում այն, որ իրենից գնված գառան միսը վաճառվում է 2500 դրամով՝ մի կողմ թողնելով երկրորդական հումքը եւ գառան մորթին, որոնք եւս քիչ փող չարժեն: Իր հաշվարկներով գառան միսը 2000 դրամով վաճառելու դեպքում էլ ինքը խանութից բավարար եկամուտ կստանա:

Դե ինչ, Աստված հաջողի: Մեր կողմից էլ լավագույն բարեմաղթություններ՝ ֆերմերին իր դժվարին աշխատանքում:

Հ.Գ. *Հայտնի ֆիլմի Պավլեի նման հաշվարկ էլ մենք կատարենք. Հանրապետությունում կա 980 հազար ոչխար (minagro.am): Յուրաքանչյուր ոչխար տարեկան կտա ամենաքիչը 2.5կգ բուրդ: 2.5 անգամ 980 հազար կանի 2 մլն 450 հազար կգ բուրդ: Բրդի 1 կգ համաշխարհային շուկայում արժե 12 ԱՄՆ դոլար: 12 անգամ 2 մլն 450 հազար կանի 29 մլն 400 հազար դոլար:*

Հազարավոր տարիներ լավագույն վաճառականի անուն հանած հայ մարդը չի կարողանում վաճառել իր արտադրած ապրանքն ու այն վառում է: Փաստորեն մենք տարեկան վառում ենք 29 մլն ԱՄՆ դոլար: Երբ որեւէ օտար մարդ կամ սփյուռքահայ 0.5-1 մլն դոլարի ներդրում է կատարում Հայաստանում իր բիզնեսն առաջ տանելու համար, մեր իշխանությունները նրան շքանշամեդալ են տալիս ու ազգուտակի լուսանկարներով հեղեղում լրատվամիջոցները:

Գյուղնախարար Սերգո Կարապետյանը հաճույքով է շաբաթական մեկ անգամ հանրապետության բնակչությանը տեղյակ պահում, թե ինչքան միրգ ու բանջարեղեն է արտահանվել:

Երեւում է անասնապահությունը, մանավանդ ոչխարաբուծությունը, գյուղատնտեսության հետ կապ չունեն: Այդպես է ստացվում:

■

Գրական Սյունիք

Խճանկար

ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ընկերոջս հետ մեր սարերն էինք գնում ու խոսում Երեւանի մեր ընկեր - բարեկամներից: Ճանապարհին մեր գյուղացի Սարգիս դային հորթեր էր արածեցնում ու քանի որ ամբողջ օրը մարդ չէր հանդիպել, անմիջապես զրույցի բռնվեց մեզ հետ:

- Երեւանից նո՞ր ես եկել, - հարցրեց:

- Հա, - պատասխանեցի, - նոր եմ եկել:

- Ո՞ւր եք գնում:

- Գնում ենք սար, պապայիս մոտ:

- Պապա էլ որ չե՞ս ասում:

- Բա ի՞նչ ասեմ:

- Պապա մի ասա, պապան փողկապով կլինի, սափրված, կոստյումով, թե չէ՝ պապայիս մոտ եմ գնում, պա՜հ - պա՜հ: Այստեղ պապա չես գտնի, նախրչի ու չոբան կգտնես, թե չէ՝ պա՜-պա... Արդեն մի շաբաթ ա՝ ջրի երես չի տեսել, քե՞զ ինչ կա: Կարճաթեւ սարոշկա ես հագել, ձեզ որ մնա, սաղ կոլխոզը մի քանի կարճաթեւ սարոշկով կփոխեք:

Նա նստեց, թեք ընկավ կողքի ու կանչեց.

- Արի, էս կողմ արի, մի նեղացի, էդ ընկերդ ո՞վ ա:

- Մեր գյուղացի են եղել, Աղաջանենցից են, Արարատի տղեն ա:

- Վա՜, լավ եմ ճանաչում ու հիշում, օղորմի ձեր պապ Մարտիրոսին: Բաքվում էր աշխատել, վարսավիր էր, մինչեւ նրա գալը բոլորին քաչալացնում էին, նա մեզ մի քիչ շնորհքի բերեց: Խելացի մարդ էր. ասում էր, որ գոհ է իր աշխատանքից, մասնագիտությունից: Այդ մասնագիտությունն էր, որ նրան թույլ չէր տալիս ուրիշների նման տարվա կեսը չոլերում քնել: Հետը մի սիրուն կնիկ էր բերել, էս կողմերին չհարմարվեց, մի օր էլ թողեց – հետ գնաց Բաքու: Էդքան սիրուն կնիկ էս կողմերում շատ քիչ է եղել, շան տղիս կնիկը հենց շարժվում էր, մարդու խելք էր գնում: Այ, կնի՜կ...

- Սարգիս դայի, կնիկների մասին հետո, Երեւանում ժողովուրդը խոսում է, որ Սովետը ճիշտ չի կառուցվել, փոփոխություններ են լինելու, մարդիկ քեզ պես հանգիստ չեն, հավաքվում, ցույց են անում:

- Հը, չլինի՞ արդեն կշտացել են, այ տղա, Սովետը քանդել չի լինի, Լենինի կառուցածը քանդել չի լինի: Խեղճ մարդն անժառանգ եղավ, ժամանակը չելավ: Ուրիշի սարքածը հե՞ր չես քանդի:

- Սարգիս քեռի, մեր ժողովուրդը Ղարաբաղի խնդիր ունի, Սումգայիթում հայերին կոտորել են, կրակի վրա երեխա են խորովել, - նեղսրտեց ընկերս:

- Վա՜յ, վա՜յ, վա՜յ, - ցնցվեց Սարգիս դային, - ասում ես՝ երեխա՞ են խորովել, բա էն կաղշա Գարբաչովն ի՞նչ է անում, բա իսկի պետություն չկա՞, օրենք չկա՞: Կարաբաղ ոչխար եմ պահել, «սեւ այգի» է նշանակում, հայերեն անուն էլ ունի: Կարաբաղցիները բեհովսալա ժողովուրդ են, կռիվ ա լինելու... Ասում ես՝ երեխա են խորովե՞լ, թյու՜, թքա՛ծ դրանց դինին, սե՛ւ ընի էդ երեխի տերը, թյու՜...

Ու կարծես խռովեց աշխարհից: Խեղճ մարդու զայրույթն ու անճարակությունն ազդել էին ինձ վրա, մանավանդ որ անընդհատ մղկտալով «վա՜յ-վա՜յ» էր անում, կարծես հիմա էլ իրեն էին անկրակ խորովում...

Սարգիս դայուն հրաժեշտ տվինք ու շարունակեցինք մեր ճանապարհը:

Կամաց-կամաց մթնում է: Սկսում են անհետանալ բոլոր ստվերները: Առաջինը խոժոռվում են սարերն ու բլուրները, հետո՝ շուրջբոլորը եզերող լեռները: Մութն ու սարը նորից դառնում են եղբայրներ, նորից են փարվում միմյանց եւ վերակենդանացնում այն բոլոր հեքիաթները, որ աշխարհում գոյություն են ունեցել, ասես թագավորների քաջ կրտսեր որդիները հենց այս սարերով ու այս մութ գիշերներով են անցել՝ սերունդների երազանք՝ անմահական խնձորն իրենց ձեռքում...

Կողքի քարքարուտն ու քարափներն արդեն չեն երեւում: Բոլորովին մթնել է. խավարը լցվել է ահ ներշնչող խորհրդավորությամբ: Քարքարուտում սկսվել է մթությամբ պարուրված մի նոր կյանք. գազանների կյանքը: Գիշերային անդորրում հնչում են նրանց ձայները: Հետաքրքիր է՝ ի՞նչ են մտորում կենդանիներն այս աշխարհի ոչնչությունը...

Ընկերոջս հետ առաջ ենք շարժվում դեպի վեր, դեպի սար: Այստեղ լուսաբացներն ավելի պաղ են: Մի տեղ ջրի հեղեղի ես հանդիպում, մեկ այլ տեղ՝ կեսօրին, մի կում ջրի համար կյանքդ կտաս:

Այս սարերն իրենց ստորոտներով թաղամասեր էին հիշեցնում, որտեղ հարեւանությամբ ապրում էին հայ, թուրք, եզդի սարվորները, ովքեր հիմնականում Սիսիանից, Արարատից ու Ղարաբաղից էին: Նրանք բարեհոգի կերպով հարեւանություն էին անում եւ ունեին իրենց հստակ սահմանները. ոչ ոք այն չէր խախտում: Միայն գազաններն էին խախտում, որոնց ահից երբեմն սկսվում էին շները: Ոչխարի միսը լիացնում էր թե՛ մարդուն, թե՛ արջին, թե՛ գայլին: Բիրտ ուժն էր այստեղ տեր ու տիրական. արջը մարդուն էր ջարդում, մարդը կրակում էր արջի վրա, գայլը պատառոտում էր ոչխարներին, իսկ շները, երբ քանակով շատ էին, ուզածիդ պես հալածում էին գայլին: Սարի հաստավիզ ցուլն էլ օրենք չէր ճանաչում, մի անգամ ձիավորով ձիու էր պոզահարել եւ ձիու աղիքները փաթաթել իր պոզերին, բայց էլի չէր հանգստացել ու առջեւի ոտքերով ճիմը պոկելով՝ հողը քանդել էր ու շարունակել էր բռռալ...

Չնայած ցուլի դիվային կատաղությանը՝ նրա տեսքից կովերի ուշքը գնում է. այնքա՜ն փայլուն երանգներ կան վրան, ասես նավթին խառնված ջրով ցայված լինի: Իրեն էլ պահում է սարի տիրոջ պես: Մի անգամ այնքան ուժեղ էր բռռացել, որ մոտիկ սարալանջին ոչխար արածեցնող Հայր ամին վախեցել ու մի ամբողջ շաբաթ չէր լսում: Ցուլից պակաս չէր Վարդո Բեկը, ով Ղարաբաղից բերված ֆերմաների վարիչն էր ու շատ խիստ ձեռք ունեցող մարդու համբավ ուներ: Օրենքն ու կարգը պահում էր մտրակով, հոտերի սահմանը խախտողն ընտիր կաշվից գործած մտրակի տասը հարված պիտի ուտեր ու գալարվեր ցավից...

«Օրինախախտը» հետո սարից իջնելու էր գյուղ, գնար Սիսիան՝ դատախազի մոտ, ու բողոքեր, բողոքողի քիթը վերքի պատճառով մի երկու անգամ մեծացած էր լինելու, դատախազը խղճալով նրան՝ ասելու էր.

- Ա՜յ այ՜ ա՜յ ... հետո՞: Բա օրենք չկա՞ :

Հետո... դատախազի ու Վարդո Բեկի զրույցի մասին Աստված էր իմանալու: Այնուհետեւ Վարդո Բեկն իր մոտ էր կանչելու «օրինախախտին» ու հարցնելու էր.

- Քանի՞ հատ եմ խփել, ի՞նը ... չայ խմի:

- Չէ, հաշվել եմ, տասը:

- Ամեն խփածիս համար տասը մանեթ եմ տալու, գո՞հ ես ...

- Եսի՞մ, շա՜տ ա ցավում...

- Շաքարով չայ կխմես, կանցնի:

Եվ հաշտությունը կայացած էր:

«Օրինախախտը» տասը հատ կարմիր տասանոցը կապելու էր գունաթափ եղած թաշկինակի մեջ ու օրվա մեջ մի քանի անգամ հաշվեր: Անհամբեր սպասելու էր այն օրվան, որ իջնի գյուղ, փողը տա կնոջն ու հերոսի կեցվածք ընդունի: Իհարկե, կնոջը կասի, որ կռվի ընթացքում մի հատ էլ ինքն է խփել ու մեջից կկիսեր, եթե բաժանողները շուտ չհասնեին ...

Սարում էլ կյանք կար, յուրահատուկ կյանք: Այստեղ էլ կանայք երեխա էին բերում, սարում էլ գերեզմանոց կար, արդեն բավականին մեծ, ամենաշքեղ քարը Գյուլբահարինն էր, որի գեղեցկության մասին մինչ օրս էլ պատմում են: Ասում են՝ վարսերը շատ երկար էին, իսկական սեւ սաթ: Ձայնը գեղգեղուն, սլացիկ իրանով ու այդ սարի մարալի իրանը հավաքում էր թանկարժեք

արծաթե քյամարը: Հովիվներից Սաքո ամին մինչեւ իր կյանքի վերջն էլ չհասկացավ, թե Գյուլբահարն ինչ էր կորցրել սարում: Նա գեղեցիկ էր եւ առավոտվա շաղի պես անարատ, ու երեւի հենց արեւն էլ նրան տարավ իր հետ...

Սարից իջնելիս, երբ ընկերոջս հետ անցնում էինք գերեզմանոցի մոտով, արդեն անձրեւում էր: Շրջված քարեր նկատեցինք ու հանկարծ մեկը ձայն տվեց.

- Էդ ո՞վ եք:

Կանգնած տեղներս սառեցինք, ճչալու ցանկություն առաջացավ, բայց սարսափն այնպես էր պատել, որ ձայն հանելու շունչ չկար:

- Մի՛ վախեցեք, ե՛ս եմ, Վազգե՛նն եմ: Խոտ էի քաղում, անձրեւ եկավ, ես էլ խոտ լցրի գերեզմանաքարի տակ ու մտա տակը: Եսիմ ո՞վ է այսպես վարվել. ոսկի են ման եկել, գերեզմանաքարերից մի քանիսը շրջել են կամ կողքից փորել: Բա դրանք մա՞րդ են: Ասում են՝ էս կողմերից չեն եղել: Երեւի ղաչաղներ են եղել: Ի՞նչ եք վախեցած ու զարմացած նայում: Բա ի՞նչ անեմ, թրջվե՞մ, ախր գիշերը ցուրտ է լինելու...

Վախը դեռ չէինք հաղթահարել ու չէինք արձագանքում: Ընկերս ուժ հավաքեց ու խոսեց.

- Բա չե՞ք վախենում գիշերն այստեղ մենակ մնալուց:

- Ինչի՞ց վախենամ. վախենալու էնքա՛ն բան կա: Հենա ասում են՝ կոլխոզները պետք է քանդեն, անհայտություն է լինելու: Լավ բան չի լինելու:

Ի միջի այլոց, մեր կողմերում «անհատ» հասկացությանը եւ գրագետը, եւ անգրագետը «անհայտ» էին ասում՝ այդ բառի մեջ տեսնելով ինչ-որ խորհրդավորություն: Պարզ ու միամիտ այս մարդիկ ճիշտ բառ էին ընտրել. իրոք, իրենց ճանապարհը դեպի անհայտություն էր տանելու, անհայտություն՝ դեպի ունեւորն ու չունեւորը, դեպի զոռբան ու մուրացիկը...

- Բայց չէ՞ որ դուք ձեր սեփականությունը կունենաք, ձեր հողը, անասունը: Կաշխատեք ձեզ համար,- նետեց ընկերս:

- Հեշտ ես խոսում: Հավատալս չի գալիս, որ մենք մի բանի տեր լինենք: Կար ժամանակ, որ մի այծից երկու կաշի էին պահանջում: Բա հետո, որ կոմունիստները հետ եկան է՜... Մեկ-մեկ կախելու են: էն ժամանակ էլ հերս կոլխոզ չէր մտնում: Տարան մեր եւ Սառնակունքի սահմանին՝ մի ձորի մեջ գնդակահարեցին ու դիակը թաքցրել էին աղվեսի բնի մեջ: Աղվեսի փայ պիտի դառնային դրանք: Բա դա անելու բա՞ն էր: Մինչեւ էսօր մեր ազգին հակա են անվանում: Ու հիմա՝ նորից: Դե արի ու գլուխ հանիր:

Ու այդ պահին ես հիշեցի, որ մեր գյուղացի Սահակը հորս ասում էր.

- Դուք դաշնակի ճու՛տ եք, ձեզ Թավրիզ պիտի քշեն: Թավրիզն է ձեր տեղը: Երկիրը երկիր չի՛. օձ է տաքացնում կրծքին:

Ու մեզ՝ երեխաներիս, թվում էր, թե այդ Թավրիզն օձերով լիքը մի տեղ է, եւ մարդն այնտեղ միայն ու միայն տառապում է:

Արդեն մթնել էր: Ծանրացած սրտով բարի գիշեր մաղթեցինք գերեզմանաքարի տակ ապաստանած խեղճ մարդուն ու շարունակեցինք իջնել: Ճանապարհին չէինք խոսում: Հասանք գյուղ եւ գյուղամեջ իջանք: Գյուղի կենտրոնում մարդիկ հավաքվել էին ու տաքտաք վիճում էին.

- Լավ, ասենք կոլխոզները քանդան, բա էս փողոցային լույսերի փողը ո՞վ ա տալու, թեկուզ էն մի մետր ճանապարհը ո՞վ ա նորոգելու, որտեղի՞ց ենք տեխնիկա բերելու, ո՞վ ա փողը տալու, - հարցնում էր գյուղի մեխանիկը, - ես հո էլ տեխնիկան ձրի չե՞մ սարքելու:

- Լավ էլ կսարքես, ձրի շատ ես կերել, էդ սիրտդ ինչո՞ւ ա ճաքում, փայդ պակասելու ա՞: Հերիք ա մեր վզի կաշին քերթեցիք: Հիմի դուք էլ կաշխատեք, - վրա բերեց Ասատուր քեռին, ով համարձակի համբավ ուներ մեր գյուղում: Նա արդեն հասցրել էր շրջկենտրոնում ցույցի մասնակցել: Պատմում էր, որ ցույցի ժամանակ իրեն մի բան դուր չէր եկել: Հայտարարել էին, որ Ղափանից ալյուրը բերել-հասցրել են փուռ, բայց դատարկող չկա, ու կամավորներ էին փնտրել: Բա հացը գա, հասնի Սիսիան, ու դատարկող չլինի՞: Սա էլ մի բան չի:

Զրույցին միջամտեց մեր փեսա Ռաֆիկը.

- Էսքան տարեկան մարդ եմ, բայց մի օր շնորհքով տանը տեղաշորի մեջ չեմ քնել: Տո կոլխոզի էլ, կոլխոզ գցողի էլ... Հողս տվե՛ք, տավարս տվե՛ք, տվե՛ք,- աղաղակում էր նա:

- Այ տղա, մի բորբոքվիր, տեսնում ես՝ Ղարաբաղի հարց կա, կռիվ մի արա, կռիվն ինքը լինելու ա, - նրան սաստեց գյուղի ավագներից մեկը:

- Կռիվը մենք ենք անելու, հեչ չիմանան, թե վախեցող կա: Գյուղ մտնող գելու դեմ պետք է հրացան հանել: Չհանես՝ էլի ա մտնելու: Հենա Անգեղակոթը ջոկատ ա հանել, մենք էլ կհանենք: Վախտին մի Անգեղակոթ ա եղել, մի Հայաստան: Լավ հիշեք, Անգեղակոթը մի օյին ա հանելու, որ սաղ Բաքուն շիվար մնա: Իմ խոսքը լավ հիշեցեք: Ես էլ եմ էքալու կռիվ, տղերքիս էլ եմ տանելու: Եթե պիտի արյուն թափվի, թող թափվի. բոլ եղավ, հերիք եղավ...

- Ռաֆիկ, քո քիրվա Աստան ամուն որ տեսնես, կսպանե՞ս, - խորամանկորեն հարցրեց մթնում նստածներից մեկը:

Ռաֆիկն անակնկալի եկավ ու մտածեց.

- էդ ո՞նց կլինի: Չէ՜, էդ չի լինի: Աստանը մեր գյուղում երեսուն տարի չոբան է եղել, բոլորի տներում էլ հաց է կտրել: Հետո էլ խեղճ մարդը կաղում էր: Աստանին ես թուրք չեմ համարում: Հալալ մարդ էր, մեր օրի մարդ էր: Աստանը չի մեր թշնամին: Աստանի համար ի՜նչ թուրք, ի՜նչ հայ, ի՜նչ նեմեց, Աստանը մարդ էր, սիրտ ուներ: Հիշու՞մ եք, Ադալաթի ընտանիքը լացելով ու հառաչելով հեռացավ գյուղից: Նրա կինը փաթաթվել էր Սաթո բաջուն. լալիս էր ու կսկծում... Նրանք ի՜նչ թուրք: Թուրքն ուրիշ ա լինում:

- Մենք իրենց ընտանիքներն առոք-փառոք ճանապարհեցինք, ավտոյով, հացով-ջրով: Բա իրենք ի՞նչ արեցին Բաքվում, Սումգայիթում, հիմա էլ Ղարաբաղում: Բա սրան ի՞նչ կասեք, - առարկեց Հայկ ապին:

Ու բոլորը լուռ էին: Ծխում էին ածխացած սրտի վերջին բեկորներն ու տակնուվրա անում այն ամենը, ինչ մնացել էր տանջված, քրքրված հոգիներում:

Մի կողմից բորբոքվող պատերազմը, մյուս կողմից օր օրի քայքայվող տնտեսությունը, բռնել էին խեղճ մարդկանց օձիքից ու քարշ էին տալիս դեսուդեն...

- Բա հիշու՞մ եք Ադալաթի կնկա երեխաբերեքի ցավերի բռնելը... Ադալաթը ո՞նց էր լաց լինում ու ասում, որ կնիկը հիվանդություն ունի, որ կարող ա լավ չլինի, հետն էլ հույս փայփայում, որ չորս աղջիկ ունենալուց հետո գոնե էս մեկը տղա լինի: Մեքենա գտանք, շրջանային հիվանդանոց տարանք, առոք-փառոք տղա ունեցավ: Մենք էլ էինք ուրախացել, հետո ոչխար մորթեց Ադալաթը, լավ ուրախացանք: Հիմի եկել ու էս օրվան ենք հասել, դե արի եւ ուրախացիր: Աշխարհը մի օրում փոխվեց: Ադալաթի կինն ասում էր, որ թող Ալլահն ուրանա իրեն, եթե ամբողջ կյանքում չհիշի ու չպատմի, որ երեխաներին Սաթո բաջին է մեծացրել իր ծնկների վրա: Հիմա Աստանն էլ, Ադալաթն էլ սեւերես են մնացել, - մտորումների մեջ էր ընկել Ավան ամին:

Նստածները սկսեցին հերթով լքել գյուղամեջը՝ «օրը բացվի, բարին՝ հետը» ասելով:

- է՜, չեմ իմանում, - ասաց ծերերից մեկը եւ ինքն էլ սկսեց կամաց-կամաց հեռանալ:

Այդ հեռավոր լեռնային գյուղում լույսերի հետ մարում էր նաեւ հույսը վաղվա օրվա հանդեպ...

Մենք էլ քայլեցինք դեպի տուն:

- Ի՞նչ ես սուս կացել, ի՞նչ ես մտածում, - հարցրեց ընկերս:

Պատասխանը եղավ ծանր լռությունը...

-Ես այս մի օրն այստեղ կարծես տարի ապրեցի, - ասաց ընկերս...

■

«Անդոկ Սյունին» միավորում է ուսանողությանը

էջ 6

բարեկարգման-սանմաքրման աշխատանքներ ենք կատարել համայնքում, ուսանողները ներկել են քաղաքապետարանի առջեւի պուրակի նստարանները, ներկով թարմացվել են գունաթափված ցանկապատները, տարիներ առաջ բարեկարգել ենք քաղաքի մուտքը խորհրդանշող տարածքը, հեռացրել ավելորդ բուսականությունը, թեպետ ասեմ, որ այժմ էլ այդտեղ բարեկարգմանթարմացման անհրաժեշտություն կա, ինչը մեր տեսադաշտում է լինելու, եւ հնարավորությունը ձեռքից բաց չենք թողնելու, չէ՞ որ մեր քաղաքի հյուրերն առաջին տպավորությունը ստանում են այդտեղից:

Ուսանողական փառատոնի շրջանակում անցկացվող միջոցառումների թվում նախեւառաջ կարելի է նշել հայրենագիտական արշավները, ծանոթությունը հնագույն եւ պատմական արժեք ունեցող հուշարձաններին: Այս անգամ երթուղին անցել է Գորիսի տարածաշրջանի եւ Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային վայրերով՝ Արցախում՝ Գանձասարի վանական համալիր, Շուշիի Ղազանչեցոց սուրբ Ամենափրկիչ եկեղեցի, Կապանի եւ Սիսիանի տարածաշրջաններում՝ Երիցվանք, Տաթեւի վանական համալիր, Ակսել Բակունցի տուն-թանգարան, Խնձորեսկի ճոճվող կամուրջ, Որոտնավանք, Զորաց քարեր, Շաքեի ջրվեժ: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առիթով նույնպես երթ է կազմակերպվել. Ծիծեռնակաբերդում հարգանքի տուրք է մատուցվել ցեղասպանության զոհերի հիշատակին, Եռաբլուրում ծաղիկներ են խոնարհել մերօրյա գոյամարտի զոհերի շիրիմներին, հաջորդ կանգառը Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանն էր, որտեղ հաղորդակցվել են Սպարապետի կյանքի ու ռազմական գործի մասին պատմող ցուցանմուշներին:

Փառատոնի մասնակիցների հիշողության մեջ երկար կմնա այն երկու օրը, որոնք անցկացրին վրանային ճամբարում: Այն տեղակայված էր նախկին «Գանձասար» մանկապատանեկան ճամբարի տարածքում: Այս համատեքստում Ա.Աբրահամյանը խնդրեց իր շնորհակալությունը թերթի միջոցով փոխանցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պրոֆիլակտորիումի տնօրենությանը՝ վրանային ճամբարին օժանդակելու համար: Իսկ այդ երկու օրն ուսանողների առօրյան իմաստավորված էր՝ ժամանցային խաղեր, կինոդիտում մեծ էկրանին եւ քննարկում: Այնուհետեւ՝ ասմունք, երգ ու պար, եւ այդ ամենը բոցկլտացող խարույկի շուրջ: Փառատոնի ծրագրով անցկացվեց ինքնակառավարման օր, երբ քաղաքի հիմնարկձեռնարկությունների ղեկավարումը ստանձնել էին ուսանողները:

Ուսանողական փառատոնի փակումը տեղի ունեցավ օգոստոսի 23-ին, որի ժամանակ մրցույթներում՝ մարզական, թե ինտելեկտուալ, աչքի ընկած պատանիներն ու աղջիկներն արժանացան պատվոգրերի ու հուշանվերների:

Մեր զրույցում անդրադարձ եղավ նաեւ հասարակական կազմակերպության բարեգործական ձեռնարկներին: Անցյալ տարի այցելել են «Արծվաբույն» տարեցների խնամքի կենտրոն՝ իրենց հետ տանելով երաժիշտ-կատարողներ, ովքեր իրենց նվագով ու երգով փորձել են հարկադրաբար այդ հաստատությունում հայտնված մարդկանց կտրել տխուր խոհերից: Նաեւ տարեցներին զբաղմունքի պարագաներ նվիրել: Նույնպիսի այց են կատարել «Կապանի երեխաների խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, այս անգամ ջերմ վերաբերմունքի են արժանացել փոքրիկները, ուսանողները հանդես են եկել համերգային փոքրիկ ծրագրով, նաեւ նվերներ են հանձնել դպրոցականներին: Երկու դեպքում էլ նպատակը նույնն է եղել՝ իմաստավորել շահառուների առօրյան:

– *Երիտասարդների ժամանցի ու հանգստի հարցում որոշակի վակուում է առաջացել, «Անդոկ Սյունի» հասարակական կազմակերպությունը ձգտում է լցնել այդ դատարկությունը,* – ասում է Քաջարանի քաղաքապետարանի մշակույթի, սպորտի, կրթության եւ երիտասարդության հարցերի բաժնի պետ Գայանե Համազասպյանը:

Ամեն ինչ դրական լույսի տակ տեսնելու մտադրություն չունեինք, ուստի Արտակ Աբրահամյանից ցանկացանք իմանալ, թե որն է երիտասարդության ժամանցի կազմակերպման, միջոցառումների կազմակերպման գործում նեղ օղակը:

– *Հասարակական կազմակերպությունը չունի իր անկյունը, մի հավաքատեղի, որտեղ կհանդիպեն երիտասարդները, հետագա անելիքները կնախանշեն: Նաեւ երաժշտական տեխնիկայի կարիք ունենք: Ճիշտ է, եւ երաժշտական տեխնիկա են տրամադրում, եւ մշակույթի պալատի բեմն են հատկացնում, բայց եթե ինքներս ունենանք այդ երաժշտական տեխնիկան, միջոցառումների անցկացման հաճախականությունն էապես կմեծանա,* - համոզմունք է հայտնում «Անդոկ Սյունի» ԿԿ համահիմնադիրը եւ հավելում, – *մյուս հարցերում փակ դռներ չեմ տեսնում»*:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի թափուր տեղի համար:

Դասվարի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչեւ 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 4-ին՝ ժամը 15:00-ին, Կապանի N5 հիմնական դպրոցում, հասցեն՝ Կապան, Բաղաբերդ 27:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 5-38-90 կամ (0285) 5-48-94 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի եւ աշխարհագրության ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հրապարակման օրվանից մինչեւ նոյեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից, Տոլորսի միջնակարգ դպրոցում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 2-ին ժամը 12:00-ին Տոլորսի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տոլորս

Տեղեկությունների համար զանգահարել 077 05 58 06:

ՄՐՑՈՒՅԹ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
Շինարարական աշխատանքներ
Մրցույթի ծածկագիր՝ CARD-/M4M/15/01

27 հոկտեմբերի, 2015թ.

1. «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD) ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) կողմից ֆինանսավորվող «Շուկաներ Մեղրիի համար» ծրագրի իրականացման շրջանակներում հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Զ.Անդրանիկի փողոց, 5-րդ փակուղի 1/2 հողամաս հասցեում գտնվող, CARD հիմնադրամին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում կատարելու շինարարական աշխատանքներ «Գյուղատնտեսական եւ անասնաբուժական սպասարկման կենտրոն» կառուցելու համար (CARD-15/01):
2. CARD հիմնադրամը հրավիրում է բոլոր իրավասու շինարարական կազմակերպություններին մասնակցելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում «Գյուղատնտեսական եւ անասնաբուժական սպասարկման կենտրոնի» շինարարական աշխատանքների իրականացման մրցույթին (CARD-15/01):
3. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն կազմակերպությունները, որոնց վերջին 2 տարվա իրականացրած շինարարական աշխատանքների ընդհանուր դրամային արժեքը ավելի է 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամից:
4. Մրցութային փաթեթները կարելի է ձեռք բերել CARD-ի գրասենյակից՝ մինչեւ 2015թ. նոյեմբերի 3-ը, ժամը 16:00 հետեւյալ հասցեով՝ ՀՀ., Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Ադելյան 3/3, հեռ.՝ 374 286 4 23 73; 374 60 440 550:
5. Շահագրգիռ կազմակերպությունները մրցութային փաթեթները ստանալու համար պետք է ներկայացնեն շինարարական աշխատանքների կատարման համապատասխան արտոնագրերի պատճենները եւ պետռեգիստրում գրանցման վկայականի պատճենը:
6. Հայտերը պետք է ուժի մեջ լինեն բացման օրվանից 60 օրվա ընթացքում եւ ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ մինչեւ 2015թ. նոյեմբերի 10-ը, ժամը 12:00 հետեւյալ հասցեով՝ ՀՀ., Սյունիքի մարզ, ք.Մեղրի, Ադելյան 3, հեռ.՝ 374 286 4 23 73; 374 60 440 550:
7. Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա **2015թ. նոյեմբերի 13-ին, ժամը 16:00-ին CARD հիմնադրամի Երեւանյան գրասենյակում (ՀՀ ք. Երեւան 0037, Ազատության 1/21, 41)՝** մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Ծավի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմություն (17.5 դասաժամ), ֆիզիկա (8.75 դասաժամ), դասվար (10 ժամ), ֆիզկուլտուրա (11 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 18.11.2015 ներառյալ, ամեն օր ժամը 10.00-15.00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 23.11.2015թ. Ծավի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ծավ:

Տեղեկությունների համար զանգահարել 094 14 80 41 հեռախոսահամարով:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ 2015թ. հոկտեմբերի 22-ին, երկարատեւ հիվանդությունից հետո, մահացել է բանաստեղծ Տիգրան Գրիգորյանի մայրը՝ Ալմաստ Մանուչարյանը: «Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է Տիգրան Գրիգորյանին՝ սիրելի մայրիկի մահվան կապակցությամբ:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է էդիկ Բարսեղյանին՝ եղբոր՝ Բորիկ Բարսեղյանի մահվան կապակցությամբ:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 30.10.2015թ.: